

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԱԳՐՔԻ, ՈՒՍՈՒՑՉԻ ԶԵՌՆԱՐԿԻ
ԵՎ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2021

ՀՏԴ 37.0
ԳՄԴ 74
Դ 210

Կազմող՝ Սարիբեկ Հակոբյան
Խորհրդատուներ՝ Գոռ Գասպարյան
Հեղինե Խաչատրյան

Դ 210 Դասագրքի, ուսուցչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի որակական բնութագրիչների ժողովածու / Կազմող՝ Ս. Հակոբյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2021.— 96 էջ:

Ժողովածուն ընդգրկում է դասագրքերին, դրանց կից ուսուցչի ձեռնարկներին և այլ ուսումնական նյութերին ներկայացվող որակական պահանջները, որոնք տրված են առանձին չափանիշներով և յուրաքանչյուրին համապատասխանող բնութագրիչներով: Ձևակերպված դրույթների տարընկալումները կանխելու նպատակով ժողովածուի երկրորդ բաժնում զետեղված է նաև ուղեցույց, որում հավելյալ պարզաբանումներ ու մեկնաբանություններ են ներկայացված բոլոր չափանիշների ու բնութագրիչների վերաբերյալ:

Ժողովածուն նախատեսված է տվյալ բնագավառին վերաբերող նորմատիվ փաստաթղթեր մշակողների, հրատարակիչների, հեղինակների, փորձագետների, ուսուցիչների և ուսումնական գրականության հետ առնչվող այլ մասնագետների համար:

ՀՏԴ 37.0
ԳՄԴ 74

ISBN 978-9939-68-903-6

© ԴՏՀՏՀ, 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժողովածուի մասին

Սույն ժողովածուի մեջ արտացոլված են հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա դասագրքերին, դրանց կից ուսուցչի ձեռնարկներին և այլ (էլեկտրոնային) ուսումնական նյութերին ներկայացվող այն պահանջները, որոնք հատկանշական են ուսումնական բոլոր առարկաների համար:

Ժողովածուն կազմելիս ուսումնասիրվել և հաշվի են առնվել դասագրքաստեղծման ինչպես հայրենական պատմական փորձը, այնպես էլ ժամանակակից աշխարհում ընդունված մոտեցումները: Կարևորվել են նաև մեզանում վերջին տասնամյակի ընթացքում հրատարակված դասագրքերի ու ձեռնարկների վերաբերյալ ուսուցիչների և այլ մասնագետների կողմից արտահայտված կարծիքները՝ դիտողությունները, առաջարկություններն ու ցանկությունները:

Ժողովածուի նպատակն է բացահայտ (տեսանելի, որոշակի) ներկայացնել դասագրքերի, ուսուցչի ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի այն բոլոր հատկանիշները, որոնք այս կամ այն ձևով տեղ են գտել ուսումնական ձեռնարկների հրատարակման պրակտիկայում. դրանց մեծ մասը նախկինում ևս ենթադրվել և հաշվի է առնվել, թեև որոշ հատկանիշներ բացորոշ ձևակերպում չեն ունեցել: Այդ հատկանիշներն ու պահանջները ժողովածուի մեջ խմբավորվել և ներկայացվել են առանձին չափանիշներով և դրանցից յուրաքանչյուրին համապատասխանող բնութագրիչներով:

Չափանիշներն ու բնութագրիչները ուղղորդող և կողմնորոշող դեր ունեն դասագրքեր, ձեռնարկներ և այլ նյութեր ստեղծող հեղինակների ու հրատարակիչների, ինչպես նաև դրանց որակը գնահատող փորձագետների համար: Գնահատման իրականացումն, անշուշտ, կախված է մի շարք գործոններից, ինչպես, օրինակ՝ գնահատման նպատակից, ուսումնական առարկայի առանձնահատկությունից, կրթական աստիճանից և այլն: Այդ հանգամանքը հաշվի է առնվել և արտացոլվել է ժողովածուում ներկայացված գնահատման մեթոդաբանությանը վերաբերող դրույթներում:

Ժողովածուն կազմված է առաջաբանից, ընդհանուր դրույթներից և 6 գլխից: Ընդհանուր դրույթներում ներկայացված են օգտագործվող հասկացությունները և դասագրքի, ուսուցչի ձեռնարկի և այլ նյութերի գնահատման մեթոդաբանությունը: Առաջին երեք գլուխները նվիրված են դասագրքի, ուսուցչի ձեռնարկի և այլ նյութերի որակական պահանջներին՝ չափանիշներին և բնութագրիչներին, իսկ վերջին երեք գլուխները՝ այդ չափանիշների և բնութագրիչների լրացուցիչ պարզաբանումներին:

Շնորհակալական խոսք

Ժողովածուի նյութերի շուրջ նախնական լայն քննարկումներ են կազմակերպվել բնագավառի մասնագետների և տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք ներկայացրել են նաև փորձագիտական կարծիքներ՝ արժեքավոր դիտողություններ, առաջարկություններ և ցանկություններ: Դրանց հիման վրա այնուհետև կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և վերամշակումներ, որոնց արդյունքում էլ ձևավորվել է ժողովածուի վերջնական տարբերակը:

Իրենց փորձագիտական ներդրումների համար խորին շնորհակալություն ենք հայտնում հատկապես հետևյալ մասնագետներին և կազմակերպություններին.

Սիլվա Պետրոսյան
Քնարիկ Հովհաննիսյան
Լուսինե Ալեքսանյան
Գևորգ Հակոբյան
Հակոբ Թադևոսյան
Գոհար Սաֆարյան
Գագիկ Մելիքյան
Արամ Նազարյան
Աստղիկ Բալայան
Վաղարշակ Մատիկյան
Աստղիկ Մնացականյան
Մադլենա Առաքելյան
Աննա Աբաջյան

Լուսինե Տոնոյան
Լիդա Սահակյան
Էմիլ Գևորգյան
Արմեն Թռչունյան
Արտավազդ Մամյան
Նունե Թորոսյան
Տիգրան Թանգամյան
Աշոտ Ղուկասյան
Դավիթ Գյուրջինյան
Կոլյա Սողոմոնյան
Սերոբ Խաչատրյան
Արսեն Վարդանյան
Արքմենիկ Նիկողոսյան

Սուրատ Մկրտչյան և «Զանգակ» հրատարակչության հեղինակային խմբեր

Արմեն Մարտիրոսյան և «Անտարես» հրատարակչության հեղինակային խմբեր

Մկրտիչ Կարապետյան և «Էդիթ Պրինտ» հրատարակչության հեղինակային խմբեր

Սուրեն Չունգուրյան և «Աստղիկ գրատուն» հրատարակչության հեղինակային խմբեր

Լյուդվիկ Հարոյան և «Տիգրան Մեծ» հրատարակչության հեղինակային խմբեր

Ռուբեն Աղայան և «Ման Մար» հրատարակչության հեղինակային խմբեր

Սաբեթ Հովհաննիսյան և «Արևիկ» հրատարակչության հեղինակային խմբեր

Կրթության ազգային ինստիտուտ
Երևանի պետական համալսարան

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հայաստանի գրողների միություն

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում նաև բոլոր նրանց, ովքեր ժողովածուի վերաբերյալ հետագայում կներկայացնեն կարծիքներ, տեսակետներ, առաջարկություններ հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ info@dshh.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Օգտագործվող հասկացություններ

Կրթության բովանդակություն — Կրթական որոշակի աստիճանի նպատակներին համապատասխան ընտրված և սովորողի համար նախատեսված գիտելիքների, տեխնոլոգիաների, կարողությունների, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված–հարմարեցված սոցիալական փորձի, մշակութային, բարոյական, գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքների ամբողջություն, որի տիրապետումն ապահովում է սովորողի հետագա ուսումնառության և կենսագործունեության համար անհրաժեշտ կարողունակությունների (կոմպետենցիաների) ձևավորումը:

Կրթության բովանդակությանը վերաբերող առանցքային հարցն է՝ «Ինչ սովորեցնել», իսկ իրականացման արդյունքի որոշման հենակետային հարցերն են՝ «Ինչ գիտենա», «Ինչ կարողանա», «Ինչպիսի վերաբերմունք ցուցաբերի», «Ինչպիսի վարքագիծ դրսևորի»:

Կրթության նախապեսվող բովանդակությունը որոշակիացվում է նորմատիվ–իրավական փաստաթղթերով, հանրակրթության պետական չափորոշչով, ուսումնական պլանով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով:

Կրթության իրականացվող բովանդակությունը որոշակիացվում և կյանքի է կոչվում ուսումնական հաստատությունների կանոնակարգված և համակարգված գործունեության, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, տեղեկատվության այլ աղբյուրների արդյունավետ օգտագործման, ուսուցման և գնահատման տեխնոլոգիաների նպատակային կիրառման միջոցով:

Դասագիրք — Որոշակի ուսումնական առարկայի ուսումնառության համար պատրաստված ձեռնարկ, որում տվյալ առարկայի չափորոշչին և ծրագրին համապատասխանող կրթության բովանդակությունը համակարգված ձևով ներկայացվում է կրթական նպատակների իրականացման և սովորողի կողմից օգտագործման համար հարմարեցված մեթոդական ապարատի միջոցով:

Դասագրքեր պատրաստելիս հաշվի են առնվում մի շարք պահանջներ, այդ թվում՝ գիտականությունը, տեսության կապը պրակտիկայի հետ, սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխանությունը, մատչելիությունը, շարադրանքի հստակությունը, տեքստերին ուղեկցող հարցերի և առաջադրանքների առկայությունը, պատկերագրադրումը:

Դպրոցական դասագրքերին ներկայացվող պահանջների լրիվ ցանկն արտացոլված է սույն ժողովածուի Գլուխ 1-ում:

Դասագրքի կառուցվածք — Դասագրքի բովանդակության ներկայացման համակարգ, որի կազմի մեջ մտնում են հարաբերականորեն ինքնուրույնություն և ամբողջականություն ունեցող մասեր. դրանք տարբերանշվում են համարակալումով և վերտառությունով (վերնագրով):

Առարկայացանկ և անվանացանկ — Ցանկ, որում ընդգրկված են դասագրքում տեղ գտած կարևոր հասկացությունների, օրենքների, տեղեկությունների անվանումները (*առարկայացանկ*) և մարդկանց անուններն ու տեղանունները (*անվանացանկ*), որոնք դասավորված են այբբենական կարգով, և յուրաքանչյուրի դիմաց նշված են դասագրքի այն էջերը, որտեղ դրանք ներկայացված են:

Ուսումնական նյութ — Կրթական որոշակի նպատակի և խնդիրների իրականացմանը ծառայող, սովորողի ուսումնառության՝ յուրացման կամ կատարման համար նախատեսված, դիդակտիկայի սկզբունքներին բավարարող բովանդակային տարր: Ուսումնական նյութ կարող են լինել՝

- յուրացման համար շարադրված տեքստը, որին կարող է ուղեկցել նաև յուրացմանը նպաստող բացատրություն, ցուցում, օրինակ,
- գիտելիքի կիրառության վերաբերյալ տեղեկությունը,
- գործնական և հետազոտական աշխատանքների կատարման եղանակների նկարագրությունը,
- կատարման առաջադրանքները, հարցաշարերը, վարժությունները,
- ուսումնասիրման համար ընտրված փաստաթղթերը, սկզբնաղբյուրները,
- տարբեր հեղինակների աշխատանքները և այլն:

Դասագրքում ընդգրկված ուսումնական նյութեր

- ա) *Ուսումնական հիմնական նյութեր* — Դասագրքում ընդգրկված այն ուսումնական նյութերը, որոնք նախատեսված են սովորողի՝ առարկայական չափորոշչով և ծրագրով նախատեսված նվազագույն մակարդակն ապահովելու համար:
- բ) *Ուսումնական լրացուցիչ նյութեր* — Դասագրքում ընդգրկված այն ուսումնական նյութերը, որոնք հարստացնում են հիմնական նյութերը և նախատեսված են տարբեր կարողություններ և հակումներ ունեցող սովորողների՝ առարկայական ծրագրի շրջանակներում կրթական պահանջները բավարարելու համար:
- գ) *Ուսումնական օժանդակ նյութեր* — Դասագրքում տեղեկատվության աղբյուրի միայն հղումով ներկայացված ուսումնական նյութեր, որոնք ծառայում են տարբեր կարողություններ, հետաքրքրություններ և հակումներ ունեցող սովորողների կրթական պահանջների բավարարմանը:

Դասագրքին կից ուսուցչի ձեռնարկ — Ուսուցչին հասցեագրված մեթոդական ձեռնարկ, որի հիմնական նպատակն է օգնել և ուղղորդել ուսուցչին՝ ապահովելու տվյալ դասագրքի արդյունավետ օգտագործումը ուսուցման գործընթացում:

Այլ ուսումնական նյութեր — Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական պլանով նախատեսվող դասընթաց(ներ)ի բովանդակությանը վերաբերող ուսումնական նյութեր, որոնք ուսուցման և ուսումնառության գործընթացում գործածվում են որպես հավելյալ և օժանդակող նյութեր՝ հիմնականում էլեկտրոնային տարբերակով: Այլ ուսումնական նյութերը բովանդակային ընդգրկմամբ կարող են լինել դասագրքին կից, ինչպես նաև անկախ (մասնավորապես՝ միջառարկայական կամ վերառարկայական):

Թեմատիկ պլան — Ուսումնական առարկայի կրթական նպատակների ու խնդիրների իրագործումն ապահովելու նպատակով պատրաստված՝ ուսուցչի աշխատանքային փաստաթուղթ, որն արտացոլում է ուսումնական պլանի, առարկայական չափորոշչի և ծրագրի պահանջները, բովանդակության և ուսումնական ժամաքանակի բաշխումը:

Թեմատիկ պլանում ներկայացվում է թեմաների և դասերի հերթականությունը, երաշխավորվող ժամաբաշխումն ըստ թեմաների և դասերի (ենթաթեմաների), յուրաքանչյուր թեմայի, դասի (ենթաթեմայի) ուսուցման նպատակներն ու ակնկալվող վերջնարդյունքները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նկատառումներ ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

Դասագրքի, դասագրքին կից ուսուցչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի գնահատումը

Դասագրքի (ուսուցչի ձեռնարկի, այսուհետ՝ ՈՒՁ, և այլ ուսումնական նյութերի, այսուհետ՝ ՈՒՆ) գնահատումն իրականացվում է սույն ժողովածուի մեջ ներկայացված չափանիշներին նրա համապատասխանությունը ստուգելու և պարզելու միջոցով: Յուրաքանչյուր չափանիշ բացորոշ արտահայտվում է մի քանի էական բնութագրիչներով, որոնցով որոշվում է դասագրքի (ՈՒՁ-ի, ՈՒՆ-ի) գնահատման ենթակա հատկանիշների առկայությունը: Դասագրքի (ՈՒՁ-ի, ՈՒՆ-ի)՝ չափանիշներին համապատասխանության աստիճանն արտահայտվում է ըստ բնութագրիչների տրվող միավորներով:

Յուրաքանչյուր բնութագրիչի համար, կախված դասագրքում (ՈՒՁ-ում, ՈՒՆ-ում) հատկանիշների առկայության չափից, տրվող միավորները հետևյալներն են՝

- բնութագրիչի հատկանիշները **մասամբ** առկա են՝ **1 միավոր**,
- բնութագրիչի հատկանիշները **հիմնականում** առկա են՝ **2 միավոր**:

Բացառիկ դեպքերում, երբ բնութագրիչի հատկանիշները դասագրքում (ՈՒՁ-ում, ՈՒՆ-ում) ակնհայտորեն բացակայում են, **միավոր չի տրվում**: Այն դեպքերում, երբ այս կամ այն բնութագրիչի առնչությամբ հավելյալ դիտարկումների անհրաժեշտություն է առաջանում, համապատասխան նշումներն արվում են կից սյունակում: Դասագրքերի մրցույթ անցկացնելիս, սահմանված կարգի համաձայն, կարող են գործածվել նաև գնահատման այլ սանդղակներ:

Դասագրքի (ՈՒՁ–ի, ՈՒՆ–ի) գնահատումը, կախված նպատակից և այլ գործոններից, կարող է կատարվել ինչպես ըստ չափանիշների և բնութագրիչների ամբողջական ցանկի, այնպես էլ ըստ չափանիշներից և բնութագրիչներից նախապես ընտրված խմբի: Այդպիսի գործոններ են կրթական աստիճանը, առարկայի առանձնահատկությունը, դասագրքի (ՈՒՁ–ի, ՈՒՆ–ի) փորձարկման կամ երաշխավորման փուլում լինելը և այլն:

Դասագրքի (ՈՒՁ–ի, ՈՒՆ–ի) ինչպես ամբողջական, այնպես էլ ըստ չափանիշների ու բնութագրիչների խմբի գնահատականը որոշվում է համապատասխան բոլոր բնութագրիչների համար տրված միավորների գումարով: Կախված գնահատման նպատակից՝ բնութագրիչների համար կարող են սահմանվել նաև կշռային գործակիցներ, որոնք հաշվի կառնվեն գումարային միավորները որոշելիս:

Մրցույթների անցկացման դեպքում նախապես սահմանվում են բնութագրիչների ընդհանուր ցանկի գումարային միավորի անցումային նվազագույն շեմ և, որպես լրացուցիչ պայման, հատուկ կարևորություն ունեցող որոշակի բնութագրիչների՝ նախապես ընտրված խմբի համար՝ անցումային ավելի բարձր շեմ: Նախքան մրցույթ անցկացնելը դասագրքերի յուրաքանչյուր խմբի (լոտի) համար նախապես որոշակիացվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ կարևորության չափանիշների ու բնութագրիչների ցանկերը: Այդ ցանկերը կազմվում են սույն ժողովածուի մեջ ընդգրկված չափանիշներից և բնութագրիչներից՝ կախված առարկայի առանձնահատկություններից և կրթական աստիճանից, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են նաև համալրվել ուրիշ բնութագրիչներով կամ առանձին բնութագրիչներում կատարվել որոշակի վերաձևակերպումներ:

Դասագրքերի մրցույթ հայտարարելիս յուրաքանչյուր առարկայախմբի համար բնութագրիչների ինչպես ամբողջական ցանկը, այնպես էլ հատուկ կարևորություն ունեցող բնութագրիչների խումբը և դրանց համապատասխան գումարային միավորների անցումային շեմերը նախապես որոշակիացվում և ընդգրկվում են մրցութային փաթեթում:

Գ Լ ՈՒ Խ 1

ԴԱՍԱԳՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սույն գլխում ներկայացված փաստաթղթում որոշակիացվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա դասագրքերին ներկայացվող այն պահանջները, որոնք հատկանշական են ուսումնական բոլոր առարկաների դասագրքերի համար: Դասագրքերին ներկայացվող պահանջները փաստաթղթում որոշակիացվել և խմբավորվել են առանձին չափանիշներով և դրանց յուրաքանչյուրին համապատասխանող բնութագրիչներով:

Չափանիշներն ու բնութագրիչները ներկայացվում են երկու մասով.

1. Դասագրքի բովանդակությանը վերաբերող չափանիշներ և բնութագրիչներ.
2. Դասագրքի բովանդակության արտահայտման եղանակին ու ձևին վերաբերող չափանիշներ և բնութագրիչներ:
Ընդ որում՝ երկրորդ մասը ներակայացվում է երեք բաղադրիչով.
 - ա) Դասագրքի մեթոդական ապարատի չափանիշներ և բնութագրիչներ.
 - բ) Դասագրքի շարադրման լեզվի չափանիշներ և բնութագրիչներ.
 - գ) Դասագրքի ձևավորման չափանիշներ և բնութագրիչներ:
Փաստաթղթի արդյունավետ գործարկման համար կարևոր են ելակետային հետևյալ դրույթները.

- Դպրոցական դասագիրքը աշակերտին հասցեագրված ուսումնական ձեռնարկ է, որով նա սովորում է՝ ուսուցչի մանկավարժական ուղղորդմամբ:
- Փաստաթղթում ներկայացված բնութագրիչներում ամրագրված են դասագրքի տարբեր հատկանիշներ. դրանց միջոցով հնարավոր է դառնում տարբեր տեսանկյուններից՝ տարբեր չափումներով գնահատել դասագրքի առանձին բաղադրիչները, և հանրագումարում ստանալ ամբողջական պատկեր:
- Բնութագրիչներում ամրագրված հատկանիշները փոխկապակցված են, ուստի և առանձին դեպքերում առկա են նաև մասնակի հատումներ (բայց՝ ոչ համընկումներ):

Չափանիշները և բնութագրիչներն առավել հանգամանորեն պարզաբանված, որոշակիացված և մեկնաբանված են սույն փաստաթղթի **ուղեցույցում** (տես *Գլուխ 4*):

1.1. Դասագրքի բովանդակությանը վերաբերող չափանիշներ և բնութագրիչներ

Չափանիշ 1. Դասագրքի բովանդակությունը համապատասխանում է չափորոշչով և ծրագրով նախատեսված բովանդակությանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
1-1	Ուսումնական նյութերն ընդգրկում են առարկայական ծրագրով և չափորոշչով նախատեսված գիտելիքների ամբողջությունը		
1-2	Ուսումնական նյութերը նպաստում են չափորոշչով և ծրագրով նախատեսված կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը		

1-3	Ուսումնական նյութերը նպաստում են չափորոշչով և ծրագրով նախատեսված արժեքային համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը		
-----	--	--	--

Չափանիշ 2. Դասագրքի բովանդակության ծավալն ու բարդությունը հիմնավորված են. տվյալ տարիքի սովորողների համար ապահովված է բովանդակության յուրացման հնարավորություն

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
2-1	Յուրաքանչյուր ուսումնական նյութի բովանդակությունը հենվում է տվյալ տարիքի սովորողների՝ ուսումնառության նախորդ ժամանակահատվածում ներկայացված բովանդակության վրա		
2-2	Ուսումնական նյութերը ներկայացված են շարունակական, աստիճանական զարգացում ապահովող հաջորդականությամբ		
2-3	Ուսումնական նյութերի ծավալն ու խորությունը համապատասխանում են ուսումնական գործունեության համար նախատեսված ժամաքանակին		

Չափանիշ 3. Դասագրքի բովանդակությունը հնարավորություն է տալիս իրականացնելու սովորողների կրթական կարիքներին համապատասխան ուսուցում

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
3-1	Դասագրքում առկա են սովորողների կրթական կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան ուսումնական <i>հիմնական</i> նյութեր, որոնք ապահովում են բովանդակության՝ չափորոշչային պարտադիր՝ նվազագույն մակարդակը		
3-2	Դասագրքում առկա են ուսումնական հիմնական նյութերը հարստացնող <i>լրացուցիչ</i> նյութեր, որոնք ուղղված են տարբեր հետաքրքրություններ և կարողություններ ունեցող սովորողների կրթական կարիքների բավարարմանը		
3-3	Դասագրքում առկա են բովանդակության յուրացմանը նպաստող <i>օժանդակ</i> նյութերի, գրականության և էլեկտրոնային աղբյուրների հղումներ, որոնք ուղղորդում են ուսումնական հետաքրքրությունների ու կարիքների ինքնուրույն բավարարմանը		

Չափանիշ 4. Ապահովված է դասագրքի բովանդակության ներկայացման գիտականությունը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
4-1	Դասագրքում ներկայացված փաստերը, տեղեկությունները, տեսական դրույթները հավաստի են, ճշմարիտ կամ ընդունելի, ուսումնական նյութերը հիմնվում են ներկայումս ընդունված տեսությունների, փաստերի, տվյալների վրա		

4-2	Պահպանված են տվյալ բնագավառում ընդունված դասակարգումները, օրենքները, օրինաչափությունները, կանոններն ու նորմերը, որոնք չեն հակադրվում գոյություն ունեցող ժամանակակից պատկերացումներին ու պրակտիկային		
4-3	Ներկայացված տեսակետները, մոտեցումները, կարծիքները, վերլուծությունները, եզրակացությունները փաստարկված են, հիմնավոր են և համոզիչ		

Չափանիշ 5. Ապահովված է դասագրքի բովանդակության մատչելիությունը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
5-1	Նոր հասկացությունների ու գաղափարների ներմուծումը ուղեկցվում է յուրացմանը նպաստող հնարներով՝ լուսաբանող օրինակներով, համեմատություններով, պարզաբանումներով և այլն		
5-2	Սահմանումները, կանոնները, օրենքները, հիմնական դրույթները ներկայացված են որոշակի, պարզ և հստակ ձևակերպումներով		
5-3	Առկա են պարզից դեպի բարդը (ծանոթից՝ անծանոթը) աստիճանական անցում ապահովող նյութեր, օրինակներ, առաջադրանքներ		

5-4	Առկա են սովորողների վրա հուզագգացմունքային (հետաքրքրություն, զարմանք և այլն) ներգործություն ունեցող նյութեր, իրավիճակներ, տվյալ բնագավառի նշանավոր մարդկանց կյանքի ու շագրավ պահեր		
-----	--	--	--

Չափանիշ 6. Ապահովված է դասագրքի բովանդակության գործնական-կիրառական ուղղվածությունը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
6-1	Ապահովված է բովանդակության կապը իրականության և կյանքի, սովորողների կենսափորձի ու գործունեության հետ		
6-2	Տեսական նյութերը զուգակցվում են գործնական առաջադրանքների հետ, տեսական-գործնական նյութերի համամասնությունը որոշված է ըստ առարկայի բնորոշ կողմերի և ըստ սովորողների տարիքային առանձնահատկությունների		
6-3	Պարզաբանված են տեսական նյութի կիրառական նշանակությունը, գործնականում կիրառության եղանակները. առկա են գործնական աշխատանքների նկարագրություններ, ցուցումներ, քայլաշարեր		
6-4	Առկա են կատարողական-վերարտադրողական և ստեղծագործական-կառուցողական բնույթի գործնական առաջադրանքներ՝ նախատեսված ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար		

Չափանիշ 7. Ապահովված են ներառարկայական և միջառարկայական կապերը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
7-1	Պարզաբանված են տվյալ ուսումնական առարկայի գիտելիքների համակարգում առկա ներքին կապերը		
7-2	Ներկայացված են տվյալ ուսումնական առարկայի և այլ ուսումնական առարկաների միջև եղած կապերն ու առնչությունները		
7-3	Առկա են օրինակներ, հիմնախնդիրներ, առաջադրանքներ, որոնք վերաբերում են նաև ուսումնական այլ առարկաներին և պահանջում են բազմառարկայական համատեղ մոտեցումներ կամ լուծումներ		

Չափանիշ 8. Բովանդակությունը նպաստում է սովորողների քննադատական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
8-1	Առկա են սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող առաջադրանքներ, ոչ միաբժեք և ոչ ստանդարտ լուծում պահանջող խնդիրներ, քննարկումների հարցեր և բանավեճերի թեմաներ		
8-2	Առկա են կարճաժամկետ և երկարաժամկետ հետազոտություններ պահանջող առաջադրանքներ, նախագծային աշխատանքների օրինակներ		

8-3	Առկա են սովորողների՝ ինքնուրույն հետազոտական աշխատանք նախաձեռնելու, սեփական գործողությունները ծրագրելու և իրականացնելու կարողությունները խթանող առաջադրանքներ		
-----	---	--	--

Չափանիշ 9. Դասագրքի բովանդակությունը հնարավորություն է տալիս ճանաչելու և գնահատելու ազգային և համամարդկային արժեքները

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
9-1	Բովանդակությունը ներառում է հայկական մշակույթին, ազգային կյանքին, հայաստանյան իրողություններին վերաբերող նյութեր		
9-2	Բովանդակությունը պարունակում է նյութեր, որոնք ապահովում են հաղորդակցում համամարդկային մշակութային արժեքներին		
9-3	Բովանդակությունը նպաստում է համամարդկային և ազգային արժեքները հարգելու, պահպանելու և փոխանցելու դիրքորոշման ձևավորմանը		
9-4	Բովանդակությունը զերծ է խտրականություն պարունակող, << սահմանադրության դրույթներին և բարոյական նորմերին չհամապատասխանող նյութերից՝ տեքստերից, պատկերներից, արտահայտություններից, առաջադրանքներից		

1.2. Դասագրքի մեթոդական ապարատի չափանիշներ և բնութագրիչներ

Չափանիշ 10. Բովանդակությունը տրոհված է մասերի (բաժին, գլուխ, պարագրաֆ, դաս և այլն) սովորելուն հարմար եղանակով

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
10-1	Մասերի տրոհման արդյունքում պահպանված են ծրագրային նյութի բովանդակության ներկայացման շարունակականությունը, ամբողջականությունը, համակարգվածությունը և տրոհված մասերի միջև կապերը		
10-2	Յուրաքանչյուր բաժնի կամ գլխի սկզբում առկա է բովանդակային շղթայի և վերջնարդյունքների վերաբերյալ ներածական համառոտ ակնարկ (կամ «ճանապարհային քարտեզ»), ինչն օգնում է սովորողին ձևակերպելու իր ակնկալիքները, իսկ վերջում կա նաև ամփոփում		
10-3	Տրոհված մասերի ծավալները համապատասխանում են դրանց ուսումնառության համար նախատեսված ժամաքանակին		

Չափանիշ 11. Առկա է բովանդակության ներկայացումը կողմնորոշող համակարգ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
11-1	Առկա են դասագրքի կառուցվածքի և բովանդակության մասերի ցանկ, առարկայացանկ և անվանացանկ		
11-2	Օգտագործված են հիմնական և լրացուցիչ ուսումնական նյութերը, առաջադրանքների տեսակները կողմնորոշող նշաններ, պայմանանշաններ, հուշող բառեր, առկա են համապատասխան ցուցումներ և պարզաբանումներ		
11-3	Առկա լրացուցիչ ընթերցանության ցանկերը, երաշխավորվող կայքերը և համապատասխան այլ հղումները ունեն առանձին ցուցանշում		

Չափանիշ 12. Դասագրքի կառուցվածքն ու բովանդակությունը հնարավորություն են տալիս կիրառելու ուսումնառության տարբեր եղանակներ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
12-1	Առկա են ուսուցման տարբեր մեթոդներով աշխատելու հնարավորություն ընձեռող նյութեր և առաջադրանքներ		
12-2	Մեթոդական ապարատը հարմարեցված է կատարելու տարբերակված աշխատանքներ՝ ըստ սովորողների կրթական կարիքների		
12-3	Անհատական և խմբային աշխատանքների համար նախատեսված նյութերն ու առաջադրանքները տարբերակված են		
12-4	Առկա են S<S կիրառմամբ կատարվող և S<S կիրառումը խթանող առաջադրանքներ		

Չափանիշ 13. Մեթոդական ապարատը նպաստում է բովանդակության յուրացմանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
13-1	Առկա են տարբեր բնույթի վարժությունների կատարման և խնդիրների լուծման եղանակները պարզաբանող օրինակներ, ցուցումներ, անհրաժեշտ հղումներ, պատասխաններ		
13-2	Գործնական (լաբորատոր), հետազոտական և նախագծային աշխատանքների առաջադրանքների համար առկա են կատարման եղանակին վերաբերող պարզաբանումներ, քայլաշարեր կամ ուղղորդումներ		
13-3	Առաջադրանքները (հարցեր, վարժություններ, խնդիրներ) տրոհված մասերում ներկայացված են հեշտից դժվար (պարզից բարդ) սկզբունքով		
13-4	Օգտագործված են բովանդակության յուրացմանը նպաստող ոչ խոսքային (դիտողական, պատկերային և այլ) միջոցներ		

Չափանիշ 14. Մեթոդական ապարատը նպաստում է տարբեր կարողությունների տեր սովորողների ինքնուրույն ուսումնառությանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
14-1	Ուսումնական նյութերի ինքնուրույն յուրացման համար առկա են նոր հասկացությունների բառարան, լուսաբանող գծապատկերներ, օրինակներ, բացատրություններ, թեմային առնչվող լրացուցիչ նյութեր, օժանդակ գրականության և էլեկտրոնային հավաստի աղբյուրների հղումներ (կայքեր, ֆիլմեր, տեսանյութեր և այլն)		
14-2	Առկա են միևնույն նյութին, թեմային առնչվող տարաբնույթ առաջադրանքներ, խնդիրներ, որոնցից սովորողը կարող է ընտրել և կատարել՝ ըստ իր կարողության, նախասիրության կամ ուսումնառության ոճի		
14-3	Առկա են աստիճանակարգված առաջադրանքներ՝ ըստ իմանալու, հասկանալու, կիրառելու, վերլուծելու, համադրելու, գնահատելու, ստեղծ(ագործ)ելու ուսումնական նպատակների, որոնք սովորողներից ակնկալում են համապատասխան ուսումնական վարքագիծ		

Չափանիշ 15. Մեթոդական ապարատը հնարավորություն է տալիս ստուգելու ուսումնառության արդյունքները

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
15-1	Բովանդակության տրոհված մասերի (բաժնի կամ գլխի) և դասագրքի վերջում առկա են գիտելիքների և հմտությունների ստուգման առաջադրանքներ (հարցեր, խնդիրներ և այլն)		
15-2	Առկա են գործնական, հետազոտական, նախագծային աշխատանքների գնահատման վերաբերյալ պարզաբանումներ		
15-3	Առկա են սովորողների կողմից սեփական գիտելիքների ու ձեռքբերումների գնահատման գործիքներ, այդ թվում՝ նյութի յուրացման, գործնական աշխատանքի արդյունքի ինքնագնահատման և փոխադարձ գնահատման սանդղակներ (ռուբրիկներ), ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ		

1.3. Դասագրքի շարադրման լեզվի չափանիշներ և բնութագրիչներ

Չափանիշ 16. Շարադրման լեզուն մատչելի է և համապատասխանում է սովորողների տարիքին, լեզվամտածողությանը, կարդալու և ըմբռնելու մակարդակին

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
16-1	Շարադրման լեզուն համապատասխանում է տվյալ տարիքի սովորողների լեզվական կարողությունների՝ չափորոշիչներով նախատեսված մակարդակին		
16-2	Շարադրման լեզուն համապատասխանում է ժամանակակից գրական լեզվի՝ տվյալ տարիքի սովորողներին ծանոթ նորմերին (բացառությամբ հեղինակային մեջբերումների)		
16-3	Տեքստերը ծանրաբեռնված չեն նոր եզրույթներով ու անծանոթ բառերով, նոր բառերն ու հասկացությունները ներմուծվում են աստիճանաբար և բացատրվում են		
16-4	Շարադրանքը զերծ է ոչ հստակ, բազմիմաստ՝ տարրնկալում առաջացնող ձևակերպումներից, եթե դրանք նախատեսված չեն հատուկ նպատակով		
16-5	Տեքստերում օգտագործված են ուշադրություն գրավող, իմացական, դրական հույզեր առաջացնող արտահայտություններ և ասույթներ		

Չափանիշ 17. Նյութը շարադրված է տվյալ ուսումնական առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
17-1	Օգտագործված բառապաշարը և ձևակերպված մտքերը ճշգրիտ են արտահայտում տվյալ ուսումնական առարկայի բովանդակությունը		
17-2	Նոր եզրույթների ու նոր գաղափարների ներմուծումը անմիջական կապ ունի առարկայական ծրագրի և չափորոշի պահանջների հետ		
17-3	Ուսումնական տեքստերում օգտագործված են տվյալ ուսումնական առարկային և բնագավառին բնորոշ հատուկ բառեր, հասկացություններ, եզրույթներ, խոսքային կառույցներ, որոնք սովորողներին հնարավորություն են տալիս յուրացնելու տվյալ բնագավառի կամ գիտության «լեզուն», ընդլայնելու ու բազմազան դարձնելու սեփական լեզվական պաշարն ու խոսքային հնարավորությունները		
17-4	Դասագրքի շրջանակում պահպանված է տեքստերի փոխադրման, տեղայնացման, մեջբերման միասնական ոճ, եթե ոճային տարածնությունները հատուկ նպատակ չունեն		

Չափանիշ 18. Դասագիրքը նպաստում է սովորողների խոսքի մշակույթի զարգացմանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
18-1	Առկա են տվյալ ուսումնական առարկայի թեմատիկայի շրջանակում բանավոր և գրավոր խոսքի ճշգրտությունը, հստակությունը, պարզությունը, պատկերավորությունը ապահովելու կարողությունների զարգացմանը նպաստող նյութեր, հարցեր և առաջադրանքներ		
18-2	Առկա են մտքերը գրավոր և բանավոր շարադրելու, տեքստեր վերաշարադրելու, համառոտագրելու, ուղղումներ կամ լրացումներ կատարելու, հաղորդման կամ զեկուցման տեքստեր գրելու առաջադրանքներ		
18-3	Առկա են բանավեճ վարելու, հարցադրում, առարկություն, դիտողություն, կարծիք, վարկած, հիմնավորում, եզրակացություն ձևակերպելու առաջադրանքներ		
18-4	Առկա են ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն և գիտակցված պահանջմունք առաջացնող նյութեր		

1.4. Դասագրքի ձևավորման չափանիշներ և բնութագրիչներ

Չափանիշ 19. Դասագրքի կառուցվածքը նպաստում է նրա արդյունավետ օգտագործմանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
19-1	Գրքի չափերը, մակետը և էջերի մակերեսների օգտագործումը հարմար են կարդալու համար		
19-2	Դասագրքի կառուցվածքը բազմակի օգտագործման հնարավորություն է տալիս, այդ թվում՝ ա) բացակայում են գրքի էջերի վրա լրացումներ կամ նշումներ կատարելու առաջադրանքներ, բ) մեկանգամյա օգտագործման նյութերի անհրաժեշտության դեպքում դրանք զետեղված են որպես ներդիրներ, որոնք կարված չեն կազմին		
19-3	Պահպանված են «Դասագրքերին ներկայացվող հիգիենիկ պահանջներ»-ով նախատեսված տպագրական չափանիշները (թղթի ընտրության, կազմի և կազմման տեխնիկայի, տպագրության տեսակի և որակի, նկարազարդման, գույների քանակի ընտրության, ներկերի որակի և անվտանգության)		

Չափանիշ 20. Տեքստերի ձևավորումը նպաստում է նյութի յուրացմանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
20-1	Տառաչափը, տառատեսակը և միջտողային հեռավորությունները համապատասխանում են ուսումնական հրատարակությունների համար սահմանված կանոններին և նորմերին		
20-2	Սահմանումները, կանոնները, օրենքները, անունները և ուշադրությունը գրավելու համար նախատեսված այլ տեղեկությունները ընդգծված են ու միատեսակ ձևավորված		
20-3	Հարցերը, առաջադրանքները, լրացուցիչ ուսումնական նյութերն առանձնացված են տառատեսակներով կամ ձևավորման այլ հնարներով		

Չափանիշ 21. Ձևավորման մեջ նպատակային են օգտագործված բովանդակության ներկայացման ոչ խոսքային միջոցները՝ պատկերազարդման տարրերը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
21-1	Պատկերազարդման տարրերը (նկար, լուսանկար, գծապատկեր, քարտեզ, աղյուսակ, դիագրամ, գրաֆիկ և այլն) հավելում, լրացում և լուսաբանում են տեքստում եղած տեղեկությունը, դիտողական են դարձնում ասելիքը		
21-2	Պատկերազարդման տարրերը տեղին են, համապատասխանում են սովորողների տարիքային առանձնահատկություններին, ճիշտ են համադրվում տեքստին, ըստ անհրաժեշտության առկա են մակագրություններ, մեկնաբանություններ, հղումներ		
21-3	Պատկերազարդման տարրերը ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում են ուսումնական նյութի վրա և նպաստում են բովանդակության յուրացմանը, օգնում են համակարգելու նյութը և կանոնակարգելու սովորողի միտքը		

Չափանիշ 22. Պատկերազարդումը կատարում է նաև դաստիարակչական գործառույթ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
22-1	Պատկերազարդման մեջ պահպանված են գեղագիտական սկզբունքները, և անկախ ուսումնական առարկայի բնույթից՝ պատկերազարդումը բուն ուսումնական խնդրից բացի՝ լուծում է նաև սովորողի գեղագիտական ճաշակի ձևավորման և բավարարման խնդիր		
22-2	Պատկերազարդումը պարունակում է ինչպես հայկական մշակույթին և հայաստանյան իրողություններին, այնպես էլ համաշխարհային մշակույթին և իրողություններին վերաբերող նյութեր		
22-3	Պատկերազարդումը պարունակում է տվյալ տարիքի երեխայի կյանքին ու հետաքրքրություններին վերաբերող նյութեր		
22-4	Պատկերազարդման մեջ օգտագործված հեղինակային նյութերի աղբյուրները կամ հեղինակները նշված են		

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍԱԳՐՔԻՆ ԿԻՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սույն գլխում ներկայացված փաստաթղթում որոշակիացվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա դասագրք(եր)ին կից ուսուցչի ձեռնարկին (այսուհետ՝ ՈՒՁ) ներկայացվող այն պահանջները, որոնք հատկանշական են ուսումնական բոլոր առարկաների համար: Այդ պահանջները փաստաթղթում որոշակիացվել և խմբավորվել են առանձին չափանիշներով և դրանց յուրաքանչյուրին համապատասխանող բնութագրիչներով: Հաշվի է առնվել, որ *դասագրքին կից ուսուցչի ձեռնարկը այլ մեթոդական ձեռնարկներից առանձնահատուկ է նրանով, որ հիմնական նպատակն է օգնել և ուղղորդել ուսուցչին՝ ապահովելու տվյալ դասագրքի արդյունավետ օգտագործումը ուսուցման գործընթացում:*

Ուսուցչի ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը օգտագործման համար երաշխավորված ժամանակահատվածում, ըստ անհրաժեշտության, սահմանված կարգով, կարող է պարբերաբար (1–2 տարին մեկ) թարմացվել՝ մասնակի վերամշակվել կամ համալրվել նոր տեղեկատվությամբ:

Ուսուցչի ձեռնարկի գնահատման վերաբերյալ պարզաբանումները ներկայացված են դասագրքի գնահատմանը վերաբերող փաստաթղթում:

Չափանիշները և բնութագրիչներն առավել հանգամանորեն պարզաբանվում, որոշակիացվում և մեկնաբանվում են սույն փաստաթղթի **ուղեցույցում** (տես *Գլուխ 5*):

Չափանիշ 1. Ներկայացված են ուսումնական առարկայի կրթական նպատակների իրականացման ուղղությամբ դասագրքում ցուցաբերված մոտեցումների վերաբերյալ ներածական պարզաբանումներ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
1-1	Պարզաբանված են ուսումնական առարկայի կրթական նպատակները, խնդիրները և ակնկալվող հիմնական արդյունքները		
1-2	Առկա են պարզաբանումներ չափորոշչով և ծրագրով նախատեսված բովանդակային բաղադրիչները (գիտելիք, կարողություն և հմտություն, արժեքային համակարգ) դասագրքում ներկայացման եղանակների վերաբերյալ		
1-3	Առկա են մեկնաբանություններ և հիմնավորումներ դասագրքի և ՈւՁ-ի կառուցվածքների և մեթոդական ապարատների վերաբերյալ		

Չափանիշ 2. Ներկայացված է դասընթացի օրինակելի թեմատիկ պլանավորում

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
2-1	Թեմաների՝ ըստ դասերի (ենթաթեմաների) տրոհումները համապատասխանում են առարկայական ծրագրի և ուսումնական պլանի պահանջներին		
2-2	Պլանավորված թեմաների և դասերի հաջորդականությունը հարմարեցված է դրանց վերաբերյալ դասագրքում ընդգրկված ուսումնական նյութերի հերթականությանը		

2-3	Թեմատիկ պլանում ենթաթեմաների (դասերի) համար ըստ անհրաժեշտության առկա են նշումներ ուսուցման հիմնական նպատակի և ուսումնական գործունեության տեսակի վերաբերյալ		
2-4	Ժամաքանակի բաշխումն ըստ թեմաների և դասերի (ենթաթեմաների) իրատեսական է՝ նախատեսվող նպատակների և ակնկալվող արդյունքների տեսանկյունից		

Չափանիշ 3. Ներկայացված են առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների՝ չափորոշիչն համապատասխան կրթական նպատակները, խնդիրները և դրանց իրականացման մեթոդներն ու մոտեցումները

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
3-1	Յուրաքանչյուր թեմայի համար պարզաբանված են կրթական նպատակը, խնդիրներն ու ելքային արդյունքները՝ մատնանշելով դասագրքում առկա այն նյութերը (հիմնական, լրացուցիչ, օժանդակ նյութերի հղումներ), որոնք ծառայում են դրանց իրականացմանը		
3-2	Լրացուցիչ պարզաբանումներ և մեկնաբանություններ կան թեմայի բովանդակության առանցքային հարցերի վերաբերյալ		
3-3	Ներկայացված են տվյալ թեմայի շրջանակներում միջառարկայական կապերի հնարավորությունները և դրանց ապահովման որոշակի մոտեցումներ		

3-4	Առկա են ցուցումներ և լուսաբանող օրինակներ տվյալ թեմայի շրջանակներում սովորողների հմտությունների զարգացման և արժեքների նկատմամբ վերաբերմունքի ձևավորման ուղղությամբ		
-----	--	--	--

Չափանիշ 4. Ներկայացված են տարբեր կարողություններով և հակումներով սովորողներին ուսումնական գործընթացում ընդգրկելու նպատակին ծառայող նյութերի կիրառման ուղղորդումներ ու մեկնաբանություններ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
4-1	Առկա են տարբեր կարողություններով ու հակումներով սովորողներին ուսումնական գործընթացում ընդգրկելու նպատակով դասագրքում ներկայացված նյութերի վերաբերյալ պարզաբանումներ և լուսաբանող օրինակներ		
4-2	Առկա են տարբեր կարողություններով և կրթական կարիքներով սովորողների համար դասագրքում ընդգրկված տարամակարդակ առաջադրանքների օգտագործման մեթոդական ցուցումներ և մեկնաբանություններ		
4-3	Պարզաբանված են դասագրքում ներկայացված լրացուցիչ նյութերի՝ ըստ սովորողների հետաքրքրությունների օգտագործման հարցերը, բերված են նաև ուսումնական օժանդակ նյութերի աղբյուրներ՝ համապատասխան հղումներով		

Չափանիշ 5. Ներկայացված են դասագրքում ընդգրկված առաջադրանքների (հարցերի, խնդիրների, գործնական և հետազոտական աշխատանքների) վերաբերյալ մեթոդական ցուցումներ և լրացուցիչ պարզաբանումներ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
5-1	Առկա են տարբեր տեսակի առաջադրանքների կրթական նպատակների (գիտելիքների ամրապնդման, ընդլայնման կամ խորացման, կարողությունների և հմտությունների զարգացման, վերաբերմունքի ձևավորման) վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և լուսաբանող օրինակներ		
5-2	Առկա են դասագրքում ընդգրկված բարդ և ոչ ստանդարտ առաջադրանքների կատարման համար խորհուրդներ, ցուցումներ, պարզաբանումներ		
5-3	Առկա են դասագրքում ընդգրկված գործնական (լաբորատոր) և հետազոտական աշխատանքների, նախագծերի իրագործման մեթոդական ցուցումներ, հրահանգներ, քայլաշարեր		
5-4	Առկա են ցուցումներ և պարզաբանումներ դասագրքում ներկայացված գործնական (լաբորատոր) աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի ու սարքավորումների օգտագործման, միջավայրի կահավորման, աշխատանքային և անվտանգության կանոնների մասին		

Չափանիշ 6. Ներկայացված են մեթոդական ցուցումներ ուսուցման ընթացքի և արդյունքների ստուգման ու գնահատման համար նախատեսված նյութերի օգտագործման վերաբերյալ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
6-1	Դասագրքից ընտրված օրինակների միջոցով պարզաբանված են սովորողների՝ տվյալ առարկայի ծրագրին և չափորոշչին համապատասխան գնահատման ձևերն ու չափանիշները		
6-2	Առկա են դասագրքում ստուգման նպատակով ընդգրկված հարցաշարերի, սանդղակների (ռուբրիկ), առաջադրանքների օգտագործման վերաբերյալ պարզաբանումներ և ցուցումներ		
6-3	Առկա են ընթացիկ և ամփոփիչ գնահատումների լրացուցիչ առաջադրանքներ, ներկայացված են համանման առաջադրանքները ինքնուրույն կազմելու վերաբերյալ մեթոդական ցուցումներ, օգտվելու համար վստահելի աղբյուրների հղումներ		

Չափանիշ 7. Ներկայացված են տարբեր տեսակի դասերի պլանավորման օրինակելի նմուշներ (նմուշներում բավարարվելու են ներքոհիշյալ բնութագրիչների պահանջները)

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
7-1	Որոշակիացված են՝ ա) դասի նպատակները, բ) ակնկալվող որոշակի արդյունքները՝ հնարավորինս հստակեցված չափորոշչային պահանջ(ներ)ով, գ) անհրաժեշտ պարագաները և ուսումնական նյութերը՝ հղելով դասագրքում ընդգրկված ուսումնական նյութերին և այլ աղբյուրների		
7-2	Նկարագրված են դասի փուլերը, ուսուցման մեթոդները, արդյունքների ստուգման (զննահատման) եղանակը		
7-3	Դասի հավանական ընթացքի վերաբերյալ ներկայացված են ուսուցչի և սովորողների գործողությունները, դրանց համար կանխատեսվող ժամանակի բաշխումը		
7-4	Ներկայացված են մեթոդական ցուցումներ դասի ամփոփման և անդրադարձման՝ ուսումնառության քայլերի հետահայաց վերլուծության վերաբերյալ		

Չափանիշ 8. Ներկայացված են ուսուցչի գործունեությանը նպաստող լրացուցիչ նյութեր, երաշխավորելի տեղեկատվության աղբյուրներ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
8-1	Առկա են դասագրքի և ՈՒՁ-ի արդյունավետ օգտագործմանը նպաստող լրացուցիչ նյութեր, այդ թվում՝ առարկայացանկ, հիմնական հասկացությունների և եզրույթների բառարան		
8-2	Առկա են ուսուցման գործընթացում օգտագործման համար երաշխավորվող գրականության ցանկ, էլեկտրոնային ուսումնական նյութերի աղբյուրներ և դրանց կիրառության վերաբերյալ մեթոդական ցուցումներ		
8-3	Առկա են ուսուցչի աշխատանքին նպաստող, այդ թվում նաև տարբեր միջոցառումների (ցերեկույթների, ստուգատեսների, մրցույթների, օլիմպիադաների) վերաբերյալ տեղեկություններ, խորհուրդներ և ցուցումներ		

Չափանիշ 9. Պարզաբանված են դասագրքում ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի ընդգրկման նպատակներն ու դրանց օգտագործմանը վերաբերող հարցերը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
9-1	Դասագրքում առկա ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի վերաբերյալ պարզաբանված և հիմնավորված են դրանց յուրաքանչյուրի ընդգրկման անհրաժեշտությունը և նպատակը		
9-2	Պարզաբանված են, թե դասագրքում ընդգրկված ուսումնական նյութերը և պատկերազարդման տարրերը ինչպես օգտագործել ուսուցման ընթացքում		
9-3	Առկա են պարզաբանումներ այն մասին, թե ինչպես գնահատել դասագրքում ընդգրկված ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի ազդեցությունը ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման վրա		

ԳԼՈՒԽ 3

ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սույն գլխում ներկայացված փաստաթղթում որոշակիացվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական պլանով նախատեսվող դասընթացների բովանդակությանը վերաբերող այն ուսումնական նյութերին ներկայացվող պահանջները, որոնք ուսուցման գործընթացում գործածվում են որպես հավելյալ և օժանդակող նյութեր՝ հիմնականում էլեկտրոնային տարբերակով: Այդ պահանջները փաստաթղթում խմբավորվել և ներկայացվել են առանձին չափանիշներով և դրանց յուրաքանչյուրին համապատասխանող բնութագրիչներով:

Փաստաթղթի գործարկման ընթացքում կարևոր է նկատի ունենալ, որ այլ ուսումնական նյութերը բովանդակային ընդգրկման առումով կարող են լինել տարբեր տեսակի՝

- ա) որոշակի առարկայի դասագրքին կից ուսումնական նյութեր,
- բ) նույն առարկայի մի քանի դասարանների դասագրքերին կից ուսումնական նյութեր,
- գ) կրթության բովանդակությանը վերաբերող, դասագրքերին ոչ կից ուսումնական նյութեր:

Սույն փաստաթղթում ներկայացված չափանիշներն ու բնութագրիչները վերաբերում են *ա* և *բ* տեսակի ուսումնական նյութերին:

Այլ ուսումնական նյութերը օգտագործման համար երաշխավորված ժամանակահատվածում, ըստ անհրաժեշտության, սահ-

մանված կարգով, կարող են պարբերաբար (1–2 տարին մեկ) թարմացվել՝ վերամշակվել կամ համալրվել նոր տեղեկատվությամբ:

Դասընթացին վերաբերող այլ ուսումնական նյութերի գնահատումը կատարվում է դասագրքի գնահատման եղանակով՝ նույն սկզբունքներով:

Չափանիշները և բնութագրիչներն առավել հանգամանորեն պարզաբանվում, որոշակիացվում և մեկնաբանվում են սույն փաստաթղթի **ուղեցույցում** (տե՛ս Գլուխ 6):

ԴԱՍԱԳՐՔ(ԵՐ)ԻՆ ԿԻՑ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻ ԶՆՆԵՐ

Չափանիշ 1. Ուսումնական նյութերի բովանդակությունը համապատասխանում է դասընթացի ծրագրին և լրացնում ու խորացնում է դասագրք(եր)ի բովանդակությունը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
1–1	Ուսումնական նյութերի բովանդակությունը անմիջական կապ ունի դասընթացի ծրագրով և չափորոշչով նախատեսված բովանդակության հետ		
1–2	Ուսումնական նյութերի բովանդակությունը լրացնում, հավելում և խորացնում է դասագրք(եր)ում արտացոլված բովանդակությունը		
1–3	Ուսումնական նյութերի բովանդակությունը չի կրկնում դասագրք(եր)ի բովանդակությունը		

Չափանիշ 2. Ուսումնական նյութերը տվյալ տարիքի սովորողների համար ապահովում են բովանդակության յուրացման հնարավորություն

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
2-1	Յուրաքանչյուր ուսումնական նյութի բովանդակությունը հենվում է տվյալ տարիքի սովորողների՝ ուսումնառության նախորդ ժամանակահատվածում ներկայացված բովանդակության վրա		
2-2	Ուսումնական նյութերի ծավալն ու խորությունը համապատասխանում են ուսումնական գործունեության համար նախատեսված ժամաքանակին		
2-3	Ուսումնական նյութերը համապատասխանում են սովորողների՝ էլեկտրոնային (թվային) սարքերից օգտվելու պատրաստվածությանը		

Չափանիշ 3. Ուսումնական նյութերում պահպանված են բովանդակության ներկայացման գիտականությունն ու մատչելիությունը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
3-1	Ուսումնական նյութի բովանդակությունը հիմնվում է ներկայումս ընդունված տեսությունների, փաստերի, տվյալների վրա, համապատասխանում է ժամանակակից պատկերացումներին ու պրակտիկային		
3-2	Օգտագործված տեխնոլոգիաները նպաստում են, որ բովանդակային նյութի հաղորդումն ու ընկալումը լինեն բազմակողմանի և առավել մատչելի		

3-3	Առկա են սովորողների վրա հուզագգացմունքային (հետաքրքրություն, զարմանք և այլն) ներգործություն ունեցող նյութեր, իրավիճակներ, տվյալ բնագավառի նշանավոր մարդկանց կյանքի ուշագրավ պահեր		
-----	---	--	--

Չափանիշ 4. Ուսումնական նյութերում ապահովված են տվյալ դասընթացի բովանդակային կապերը ուսումնական այլ առարկաների և իրական կյանքի հետ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
4-1	Ներկայացված են օրինակներ և հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են նաև ուսումնական այլ առարկաներին և պահանջում են բազմառարկայական համատեղ մոտեցումներ		
4-2	Ներկայացված են օրինակներ, որոնցում լուսաբանվում են դասընթացի բովանդակության կապերը իրականության և կյանքի հետ		
4-3	Ներկայացված են տեսական նյութերի՝ գործնականում կիրառության եղանակներ, գործնական աշխատանքների նկարագրություններ և ցուցադրումներ		

Չափանիշ 5. Ուսումնական նյութերը նպաստում են տարբեր կարողություններ և հակումներ ունեցող սովորողների ինքնուրույն ուսումնառությանը

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
5-1	Առկա են միևնույն թեմային առնչվող տարաբնույթ նյութեր և առաջադրանքներ, որոնցից սովորողը կարող է ընտրություն կատարել ըստ իր կարողության, նախասիրության կամ ուսումնառության ոճի		
5-2	Օգտագործված են տեղեկատվության հաղորդման բազմազան՝ խոսքային և ոչ խոսքային (աղյուսակներ, դիագրամներ, գծապատկերներ, քարտեզներ, տեսանյութեր և այլն) միջոցներ		
5-3	Առկա են անհատական և խմբային աշխատանքների տարբեր տեսակի և տարբեր բարդության առաջադրանքներ		

Չափանիշ 6. Ուսումնական նյութերը հնարավորություն են տալիս ճանաչելու և գնահատելու ազգային և համամարդկային արժեքները

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
6-1	Ուսումնական նյութերի բովանդակությունը ներառում է հայկական մշակույթին, ազգային կյանքին, հայաստանյան իրողություններին վերաբերող նյութեր		
6-2	Ուսումնական նյութերի բովանդակությունը պարունակում է նյութեր, որոնք ապահովում են հաղորդակցում համամարդկային մշակութային արժեքներին		

6-3	Ուսումնական նյութերի բովանդակությունը գերծ է խտրականություն պարունակող, ՀՀ սահմանադրության դրույթներին և բարոյական նորմերին չհամապատասխանող նյութերից՝ տեքստերից, պատկերներից, արտահայտություններից, առաջադրանքներից		
-----	--	--	--

Չափանիշ 7. Ուսումնական նյութերի ներկայացման լեզուն համապատասխանում է սովորողների տարիքին, լեզվամտածողությանը և նրանց խոսքի մշակույթի զարգացման նպատակին

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
7-1	Ուսումնական նյութերի ներկայացման լեզուն համապատասխանում է տվյալ տարիքի սովորողների լեզվական կարողությունների՝ չափորոշիչներով նախատեսված մակարդակին		
7-2	Ուսումնական նյութերի ներկայացման լեզուն համապատասխանում է ժամանակակից գրական լեզվի՝ տվյալ տարիքի սովորողներին ծանոթ նորմերին (բացառությամբ հեղինակային մեջբերումների)		
7-3	Ուսումնական նյութերում առկա են ձայնագրություններ, որոնցում պահպանված են բանավոր խոսքի առոգանությունը և բարեհնչյունությունը		

Չափանիշ 8. Ուսումնական նյութերի ձևավորումն ապահովում է օգտագործման հարմարավետություն

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
8-1	Ուսումնական նյութերի հերթակա- նությունը, տրոհումները, վերնա- գրերը և նշանային համակարգը ներ- դաշնակ են տվյալ դասընթացի դա- սագրք(եր)ի հետ (դրանք զուգահեռ օգտագործելիս սովորողը հեշտ է կողմնորոշվում)		
8-2	Ուսումնական նյութերի ձևավորումը (չափս, գույն, ձայն, շարժունություն և այլն) կատարված է ճաշակով, պահպանված են գեղագիտական սկզբունքները, ինչը հաճելի է դարձ- նում այդ նյութերի օգտագործումը		
8-3	Ուսումնական նյութերի ձևավորման ընթացքում հաշվի են առնվել և պահ- պանվել են էլեկտրոնային ուսումնա- կան նյութերի համար սահմանված առողջապահական նորմերը		

Չափանիշ 9. Ուսումնական նյութերին կից առկա են դրանց օգտագործմանը վերաբերող ուղեցույց հրահանգներ և ցուցումներ

N	Բնութագրիչներ	Միավոր	Նշումներ
9-1	Առկա են ուսումնական նյութերի օգտագործման համար անհրաժեշտ տեխնիկական և տեխնոլոգիական (ծրագրային) ապահովման վերաբերյալ հրահանգներ, պարզաբանումներ, ցուցումներ		
9-2	Առկա են ցուցումներ և պարզաբանումներ ուսումնական նյութերի և դասագրքերի բովանդակային (թեմատիկ) կապերի, ուսուցման ընթացքում դրանց փոխհամաձայնեցված օգտագործման վերաբերյալ		
9-3	Առկա են ուսումնական նյութերում առաջարկվող գործնական, հետազոտական, նախագծային և այլ առաջադրանքների կատարման և ներկայացման վերաբերյալ ցուցումներ, խորհուրդներ, օրինակների ցուցադրումներ		

ԳԼՈՒԽ 4

ԴԱՍԱԳՐՔԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Դ չափանիշ 1

Այս չափանիշով ընդհանրական, ամփոփ գնահատական է տրվում դասագրքի բովանդակության լրիվության և ամբողջականության վերաբերյալ, ընդ որում՝ գնահատման հիմքում ընկած է համեմատությունը առարկայական ծրագրում և չափորոշում ներկայացված բովանդակության հետ:

1-1 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ծրագրով և չափորոշով նախատեսված գիտելիքները՝ փաստերը, օրենքները, կանոնները, սկզբունքները, ճանաչողական և կիրառական նշանակություն ունեցող տեղեկությունները:

Դասագրքում գիտելիքները կարող են ներկայացված լինել բացատրական և լրացուցիչ նյութերում, տարբեր առաջադրանքների նկարագրության տեքստերում, ինչպես նաև հղումներով ներկայացված ուսումնական նյութերում:

Ծանոթություն: Կարևորություն ունի նաև դասագրքում գիտելիքների ներկայացման հաջորդականությունը, և դա պայմանավորված է այն նպատակով, որ հնարավորինս բացառվեն տարբեր, հատկապես հարակից առարկաների դասագրքերի միջև թեմատիկ՝ միջառարկայական կապերին վերաբերող անհամապատասխանությունները:

1-2 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքում ընդգրկված բացատրական ու լրացուցիչ նյութերը և հատկապես առաջա-

դրանքներն ու հարցադրումները նպաստում են արդյոք, որպեսզի սովորողը գործնականում կարողանա կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել քննադատական մտածողության, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական այնպիսի կարողություններ ու հմտություններ, որոնք համապատասխանում են չափորոշյով և ծրագրով նախատեսված կրթական նպատակներին ու խնդիրներին:

1–3 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքում առկա են արդյոք նյութեր, որոնք նպաստում են սովորողի աշխարհայացքային, բարոյական, գեղագիտական, անձնային և քաղաքացիական այնպիսի վերաբերմունքի ու դիրքորոշման ձևավորմանը, որոնք նախատեսված են հանրակրթության պետական չափորոշյով և տվյալ առարկայի ծրագրով և չափորոշյով:

Արժեքային կողմնորոշում ապահովող նյութերը (օրինակները, իրադրությունները, հարցադրումները, երկրնտրական մոտեցումները և այլն) հնարավորություն են տալիս ցուցաբերելու որոշակի վերաբերմունք և դրսևորելու համարժեք վարքագիծ (հրավիճակում կողմնորոշվել, ընտրություն կատարել, որոշում կայացնել, գիտակցված քայլեր նախաձեռնել, քաղաքացիական ակտիվություն դրսևորել և այլն):

Դ չափանիշ 2

Այս չափանիշով դասագրքի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա ծավալը, խորությունը և բարդության աստիճանը արդյոք ներկայացված են այն չափով, որ ապահովում են տվյալ տարիքի սովորողների կողմից ընկալման և յուրացման հնարավորություն:

2–1 բնութագրիչով որոշվում է, թե ներկայացված ուսումնական նյութերի բովանդակությունը յուրացնելու համար անհրաժեշտ բազային գիտելիքներն ու հմտությունները արդյոք նա-

խատեսված են եղել ուսումնառության նախորդ ժամանակահատվածում:

Այդ նպատակով համեմատություն է արվում ինչպես տվյալ առարկայի, այնպես էլ հարակից առարկաների ծրագրերի այն բովանդակության հետ, որն առնչվում է տվյալ նյութին (թեմային) և նախատեսված է եղել ուսումնառության նախորդ ժամանակահատվածում (նախորդ դասարաններում և տվյալ ուսումնական տարվա արդեն անցած ժամանակահատվածում) իրականացնելու համար:

2–2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերը արդյոք ներկայացված են այնպիսի հաջորդականությամբ, որ ապահովեն շարունակական և աստիճանական զարգացում: Ընդ որում՝ պետք է հնարավորինս կանխված լինեն մի կողմից՝ նույնական կրկնաբանությունները ինչպես տվյալ, այնպես էլ հարակից առարկաների բովանդակությունների ներկայացման ընթացքում, իսկ մյուս կողմից՝ չհիմնավորված «թռիչքածև» անցումները:

2–3 բնութագրիչով որոշվում է բովանդակության ծավալի և խորության համապատասխանությունը ուսումնական գործունեության համար ուսումնական պլանով հատկացված ժամաքանակին: Այդ նպատակով, հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ մանկավարժության տեսության և պրակտիկայի արդյունքները, ընդհանրական գնահատական է տրվում այն հարցին, թե որքանով է իրատեսական ուսումնական նյութերում ամփոփված տեղեկատվության յուրացումն ու առաջադրանքների կատարումը դրանց համար նախատեսվող ժամանակահատվածի ընթացքում:

Ի դեպ՝ նախատեսվող ժամանակահատվածի մեջ դասացուցակային ժամաքանակի հետ մեկտեղ ներառվում է նաև արտադասարանական, այդ թվում նաև տնային աշխատանքների համար հատկացվող ժամանակը:

Դ չափանիշ 3

Այս չափանիշով դասագրքի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե բովանդակությունը ներկայացնելիս ինչպես է հաշվի առնված այն իրողությունը, որ նույն դասագիրքն օգտագործելու են տարբեր կարողություններ և կրթական տարբեր հետաքրքրություններ ու կարիքներ ունեցող սովորողները: Գնահատման չափանիշը վերաբերում է նրան, թե դասագրքում ընդգրկված ուսումնական և լրացուցիչ նյութերը, տարբեր տիպի առաջադրանքները և օժանդակ նյութերի հղումները արդյոք ապահովում են հնարավորություններ տարբեր սովորողների կրթական պահանջմունքների բավարարման համար:

Պարզաբանում: Կրթական կարիքը, ի տարբերություն հետաքրքրասիրությունների և ցանկությունների, այն պահանջմունքներն են, որոնց բավարարումը անհրաժեշտություն է, այսինքն՝ դրանց չբավարարելու դեպքում լուրջ դժվարություններ կառաջանան հետագա ուսումնառության և կենսագործունեության ընթացքում:

3-1 բնութագրիչով որոշվում է, թե որքան հստակորեն են ներկայացված ուսումնական հիմնական նյութերը, այսինքն՝ այն նյութերը, որոնք համապատասխանում են բովանդակության չափորոշչային նվազագույն մակարդակին և պարտադիր են տվյալ տարիքի բոլոր սովորողների համար՝ անկախ նրանց այլ հետաքրքրություններից և հակումներից:

3-2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական հիմնական նյութերի բովանդակությունը լրացնող, հարստացնող կամ խորացնող ինչպիսի նյութեր են ամկա, որոնք տարբեր կարողություններ և հակումներ ունեցող սովորողներին հնարավորություններ են տալիս բավարարելու իրենց կրթական կարիքներն ու պահանջմունքները:

Որպես լրացուցիչ նյութեր, կախված առարկայից և սովորողների տարիքից՝ կարող են լինել թեմային առնչվող հավելյալ տեղեկություններ, փաստեր, փաստաթղթեր, վկայություններ,

վերլուծական տեքստեր, հիմնական նյութի առանձին դրույթները հիմնավորող ապացուցողական նյութեր, փորձերի և դիտումների նկարագրություններ, հետազոտական մեթոդների և կիրառական խնդիրների պարզաբանումներ, ինչպես նաև տարբեր տիպի առաջադրանքներ և դրանց կատարման վերաբերյալ ցուցումներ ու քայլաշարեր:

3–3 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքում ընդգրկված ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերից բացի՝ առկա են արդյոք տեղեկատվության այլ աղբյուրների հղումներ, որոնք տարբեր հետաքրքրություններ և կարողություններ ունեցող սովորողներին ուղղորդում են ինքնուրույն բավարարելու իրենց կրթական պահանջմունքները՝ դրանով իսկ նպաստելով սովորել սովորելու կարողությունների զարգացմանը:

Դ չափանիշ 4

Այս չափանիշով դասագրքի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա ներկայացման ընթացքում ինչպես են բավարարված գիտականության սկզբունքից բխող պահանջները:

4–1, 4–2, 4–3 բնութագրիչների հատկանիշների առկայությունը որոշելիս հարկավոր է կատարել որոշ վերապահումներ: Բանն այն է, որ յուրաքանչյուր ուսումնական առարկայի բովանդակությունը ոչ լիովին է նույնական նրա ներկայացրած բնագավառի (օրինակ՝ նույնանուն գիտության, գրականության, արվեստի, լեզուների և այլն) բովանդակության հետ:

Հաշվի առնելով սովորողների տարիքի հետ կապված ընկալման հնարավորությունները՝ բովանդակության մատչելիությունն ապահովելու նպատակով, դասագրքում երբեմն անհրաժեշտ է լինում գործածել նկարագրական սահմանումներ, ինտուիցիայի և ակնհայտության վրա հիմնված ոչ խիստ ապացուցումներ, մասնավոր դեպքերի դիտարկման հիման վրա կատարվող ընդհանրացումներ և գիտական հետևողականությանը ոչ լիարժեք բավարարող այլ մոտեցումներ:

Գիտականության ապահովման պահանջները դասարանից դասարան փոխվում են: Օրինակ՝ եթե կրտսեր դասարաններում ներկայացվում են փաստերի պարզ և պատկերավոր նկարագրություններ, երևույթների ոչ խորքային բացատրություններ, ապա բարձր դասարաններում կարող են ներկայացվել նաև գիտական տարբեր ուղղությունների այլընտրանքային մոտեցումներ կամ նորագույն հետազոտությունների արդյունքներին վերաբերող որոշ վարկածներ:

Բոլոր դեպքերում, հանուն մատչելիության ապահովման կամ այլ նպատակի՝ բացառվելու է ոչ հավաստի տեղեկությունների, անհիմն փաստերի ու փաստարկների, սխալ հետևությունների և ընդունված նորմերին ու դրույթներին հակասող պնդումների առկայությունը դասագրքում:

Դ չափանիշ 5

Այս չափանիշով դասագրքի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա ներկայացման ընթացքում ինչպես են բավարարված մատչելիության սկզբունքից բխող պահանջները, բովանդակությունը ինչքանով է հասանելի տվյալ տարիքի սովորողներին:

Դասագրքի բովանդակությունը ներկայացնելիս գիտականությունը (չափանիշ 4) և մատչելիությունը (չափանիշ 5) զուգահեռ գործող սկզբունքներ են, սակայն դրանք որոշակիորեն համակշռում են միմյանց (պատկերավոր ասած՝ գիտականությունը «չափավորվում» է մատչելիությամբ):

5-1, 5-2, 5-3 բնութագրիչների հատկանիշների առկայությունը որոշելիս կարևոր է հաշվի առնել ուսումնական առարկայի և կրթական աստիճանի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ տարրական դասարանների դասագրքերում բացատրությունները հիմնականում նկարագրական են, հենվում են սովորողների արդեն ունեցած պատկերացումների ու կենսափորձի վրա, ձևակերպումները, կանոնները, օրենքները, հիմնական դրույթները ներկայացվում են սովորողներին ծանոթ բառերով,

իսկ միջին և ավագ դպրոցների դասագրքերում աստիճանաբար ավելանում է մասնագիտական եզրույթների, տեսական բնույթի ձևակերպումների, ճանաչողության և կիրառության մեթոդների գործածությունը:

5-4 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերի՝ զուտ առարկայական («սառը» մտածողության վրա հիմնված) տեքստերի շարադրանքի հետ մեկտեղ առկա են արդյոք հետաքրքրական, հուզազգայական արձագանք ենթադրող, գրավիչ նյութեր (օրինակ՝ պատկերավոր մտքեր, ուշագրավ պատմություններ, հետաքրքրաշարժ առաջադրանքներ, հանելուկներ, անսպասելի դեպքերի, փաստերի, իրավիճակների հիշատակումներ և այլն), որոնք հաճելի են դարձնում դասագրքի հետ աշխատանքը և նպաստում են բովանդակության յուրացմանը, դրական վերաբերմունք են առաջացնում սովորելու նկատմամբ:

Դ չափանիշ 6

Այս չափանիշով դասագրքի վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե ինչպես է նրա բովանդակությունը կապվում կյանքի և սովորողների գործունեության հետ, պահպանված է արդյոք ուսումնական գործընթացի ճանաչողական և կիրառական գործառույթների արդյունավետ զուգակցման սկզբունքը, ինչպես են ներկայացված տեսական նյութերի գործնական-կիրառական խնդիրները:

6-1, 6-2, 6-3, 6-4 բնութագրիչների հատկանիշների առկայությունը որոշելիս կարևոր է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները՝ նկատի ունենալով, որ՝

ա) տարրական դասարանների դասագրքերում գերակշռում են գործնական նյութերն ու օրինակները, որոնք հնարավորություն են տալիս կատարելու տեսական բնույթի պարզագույն ընդհանրացումներ, եզրահանգումներ, կշռադատություններ (բացատրություններ, հիմնավորումներ, պատճառահետևանքային կապեր, օրինաչափություններ և այլն),

- բ) միջին դասարանների դասագրքերում համեմատաբար ավելանում է տեսական նյութերի ծավալը, սակայն դրանք սերտորեն կապվում են կիրառական խնդիրների հետ, իսկ գործնական առաջադրանքները սովորողներին հնարավորություն են տալիս ոչ միայն գիտելիքները կիրառելու, այլև փորձարկելով ինքնուրույն եզրահանգումներ անելու,
- գ) ավագ դպրոցի դասագրքերում ընդգրկված նյութերը սովորողներին հնարավորություն են ընձեռում անելու նաև տեսական եզրահանգումներ, իրավիճակային վերլուծություններ, հիմնավորումներ, տեսական դրույթների հիման վրա մշակելու ծանոթ և անծանոթ (ստանդարտ և ոչ ստանդարտ) իրավիճակներում գործնական կիրառության օրինակներ, հետազոտություններ, նախագծեր:

Դ չափանիշ 7

Այս չափանիշով դասագրքի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե ուսումնական նյութերում ինչպես են ներկայացված գիտելիքների, կիրառվող մեթոդների, կարողությունների և արժեքների կապերը տվյալ ուսումնական առարկայի և մյուս ուսումնական առարկաների ու բնագավառների միջև:

Խոսքը վերաբերում է ինչպես ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերին, այնպես էլ առաջադրանքներին և հղումներով ներկայացված օժանդակ նյութերին: Ընդ որում՝ նկատի է առնվում նաև նախորդ տարիներին դիտարկված ուսումնական նյութերի հետ կապերը, իսկ առանձին դեպքերում կարող են մատնանշվել այնպիսի ուսումնական նյութերի հետ կապեր, որոնք նախատեսվում են դիտարկել հետագայում:

7-1 բնութագրիչով որոշվում է ներառարկայական կապերի, իսկ **7-2** բնութագրիչով՝ միջառարկայական կապերի առկայությունը:

- Միջառարկայական կապերի պարագայում կարևոր է որոշել՝
- ա) էական են արդյոք ներկայացված կապերը, թե դրանք պատահական, տարերային բնույթ ունեն,
 - բ) արդյոք բազմազան են կապերը՝ ներկայացված են կապեր ուսումնական տարբեր առարկաների, թե ընդամենը մեկ կամ երկու առարկաների հետ,
 - գ) այս կամ այն առարկայի հետ կապերը արդյոք երկողմանի են (կապերը երկկողմանի են, եթե մի կողմից՝ այլ առարկաներից վերցված փաստերը, տեղեկությունները, օրենքները, մեթոդները, գաղափարները օգտագործվում են տվյալ առարկայի ուսումնական նյութերում, և մյուս կողմից՝ ներկայացվում են տվյալ առարկայի փաստերի, օրենքների, գաղափարների և այլնի կիրառումը մյուս առարկաներին վերաբերող իրադրություններում):

7–3 բնութագրիչով որոշվում է՝ առկա են արդյոք նեղ առարկայական սահմանազատումներ չենթադրող այնպիսի օրինակներ, առաջադրանքներ, հիմնախնդիրներ, որոնք հնարավորություն են տալիս ցուցաբերելու բազմառարկայական կամ վերառարկայական ինտեգրված մոտեցումներ, առաջարկելու բազմակողմանիորեն հիմնավորված լուծումներ: Այդպիսի հնարավորություններ են ընձեռում մասնավորապես գործնական, հետազոտական, նախագծային աշխատանքների առաջադրանքները:

Դ չափանիշ 8

Այս չափանիշով դասագրքի բովանդակությանը գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա ներկայացման մեջ ինչպես են կարևորվել սովորողների՝ ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու, հետազոտություն պահանջող առաջադրանքներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու, գործողությունների ծրագրեր մշակելու, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողություններ զարգացնելու հարցերը:

8-1 բնութագրիչով որոշվում է, թե որքան բազմազան ու բազմաբնույթ են այն հարցերը, խնդիրները, առաջադրանքները, դրանցում արտացոլված իրադրությունները, պայմաններն ու պահանջները, որոնք ենթադրում են զանազան մոտեցումներ, ուսումնական տարբեր նպատակների համապատասխանող վարքագծեր:

8-2 բնութագրիչով որոշվում է հետազոտություններ պահանջող և կրթական տարբեր նպատակների ծառայող առաջադրանքների և նախագծային աշխատանքների առկայությունը՝ կարևորելով նաև առաջադրանքների կատարման վերաբերյալ որոշակի ցուցումների առկայությունը:

Ընդ որում՝ բնութագրիչում նախագծային աշխատանքների վերաբերյալ շեշտվում է միայն նմուշօրինակների առկայությունը այն նկատառումով, որ նախընտրելի է (միջին և հատկապես բարձր դասարաններում) սովորողների կողմից նախագծի թեմայի և հետազոտության հիմնահարցի ինքնուրույն ընտրությունը (դասարանային քննարկման արդյունքում է ձևավորվում այն թեման կամ հիմնահարցը, որի հետազոտումը առավել կարևոր է համարվում սովորողների մեծամասնության կողմից):

8-3 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերի տեքստերում և հատկապես առաջադրանքներում առկա են արդյոք այնպիսի հարցադրումներ, պահանջներ, հղումներ, որոնք սովորողներին մղում են նախաձեռնելու և ինքնուրույն կատարելու մտավոր աշխատանք, կազմելու ինքնուրույն գործունեության ծրագիր, վերլուծելու և գնահատելու ծրագրի իրականացման ընթացքն ու արդյունքները:

Դ չափանիշ 9

Այս չափանիշով դասագրքի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե տվյալ ուսումնական առարկայի ընձեռած հնարավորությունների շրջանակներում ինչպես են արտացոլված հայաստանյան իրողությունների, ազգային կյանքի ու մշակույթի ճանաչման, ազգային

ինքնության պահպանման, համամարդկային մշակութային արժեքների հետ հաղորդակցման, այդ ամենի նկատմամբ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումներին համապատասխանող վերաբերմունք և դիրքորոշում ունեցող քաղաքացու ձևավորման հարցերը:

Այդ հարցերը, կախված ուսումնական առարկայից, կարող են այս կամ այն չափով ներկայացված լինել ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերի տեքստերում, օժանդակ նյութերի հղումներում, հարցերի, խնդիրների, առաջադրանքների գործնական և հետազոտական աշխատանքների շարադրանքներում, դասագրքի ձևավորման մեջ օգտագործված պատկերներում (տե՛ս նաև չափանիշ 22-ը):

- 9-1** բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք նյութեր՝
- Հայաստանի պատմության, ազգային հերոսների, պատմական, գիտական, մշակութային և այլ գործիչների,
 - ազգային ավանդույթների, սովորույթների, կենցաղային, ընտանեկան հարաբերությունների և այլ արժեքների,
 - Հայաստանում ապրող, աշխատող մարդկանց, նրանց առօրյայի և ձեռքբերումների,
 - Հայաստանի մարզերի, տարբեր համայնքների,
 - Սփյուռքի հայկական համայնքների,
 - Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների, նրանց մշակութային կյանքի,
 - հայկական ճարտարապետական հուշարձանների, տեսարժան վայրերի,
 - բնաշխարհի՝ բնության ու բնական հուշարձանների,
 - պետական ու հասարակական կյանքի հաջողությունների ու հիմնախնդիրների մասին:

<հշեցում: Այս բնութագրիչով ներկայացված հատկանիշները ինքնանպատակ, արհեստականորեն չպետք է պարտադրվեն դասագրքի բովանդակությանը, այլ պետք է ըստ ընձեռված հնարավորության՝ ներդաշնակվեն ուսումնական նյութերի բովանդակությանը:

9–2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական առարկայի ընձեռած հնարավորությունների շրջանակներում ինչպես են ներկայացված այլ ազգերի, երկրների, նրանց գործիչների (գրողների, արվեստագետների, գիտնականների, մարզիկների և այլնի) կողմից ստեղծված, պատմականորեն և ժամանակակից աշխարհում ճանաչում գտած գործերը, ստեղծագործությունները, գյուտերը, ձեռքբերումները և այլն: Կախված ուսումնական առարկայից՝ կարող են ներկայացված լինել տարբեր երկրների ու ժողովուրդների հետ Հայաստանի ունեցած պատմական և ժամանակակից կապերի ու առնչությունների, իսկ օտար լեզուների դասագրքերում նաև տվյալ լեզվակիր ժողովրդի պատմության, սովորույթների ու ավանդույթների մասին:

9–3 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք այնպիսի իրավիճակների նկարագրություններ, գործնական, հետազոտական և նախագծային աշխատանքներ, քննարկումների ու բանավեճերի հարցեր, որոնք սովորողներին հնարավորություն են տալիս ոչ միայն ճանաչելու ու հաղորդակցվելու ազգային և համամարդկային արժեքներին, այլև ձևավորելու սեփական վերաբերմունք և դրսևորելու համապատասխան վարքագիծ այդ արժեքների նկատմամբ:

9–4 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքում ինչպես է արտացոլված հասարակության բազմազանությունը, տարբեր շերտերի, հասարակական և միջանձնային փոխհարաբերությունների, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին << Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների ապահովումը:

Դ չափանիշ 10

Այս չափանիշով դասագրքի վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա բովանդակությունը մեթոդական առումով որքանով հարմար եղանակով է տրոհված այնպիսի մասերի (բաժին, գլուխ, պարագրաֆ,

դաս և այլն), որոնց շնորհիվ բովանդակության յուրացումը դառնում է առավել դյուրին:

10-1 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքում բովանդակության տրոհումները որքանով են համեմատելի ծրագրով նախատեսված թեմատիկ տրոհումների հետ, այդ տրոհումները որքանով են համապատասխանում տեղեկատվության ներկայացման և յուրացման օրինաչափություններին (աստիճանականություն, շարունակականություն, համակարգվածություն, ամբողջականություն): Նաև պարզվում է, թե յուրաքանչյուր տրոհված մասը արդյոք հարաբերականորեն ինքնուրույն և ավարտուն միավոր է, և արդյոք ապահովված են տարբեր մասերի միջև անցումներն ու կապերը:

Պետք է նկատի ունենալ, որ համեմատաբար ծավալուն տեքստերով նյութերը իրենց հերթին հաճախ կարիք են ունենում նույնպես տրոհելու հարաբերականորեն ամփոփ բովանդակային հատվածների, որպեսզի ապահովվի տվյալ տարիքի սովորողների՝ համեմատաբար կարճ ժամանակում յուրացնելու հնարավորությունը:

10-2 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի բովանդակության տրոհված հիմնական մասերի՝ բաժինների կամ գլուխների սկզբում արդյոք ներկայացված է բովանդակային ընդհանուր կառուցվածքի և վերջնարդյունքների վերաբերյալ ներածական համառոտ ակնարկ կամ պատկերավոր ուրվագիծ՝ «ճանապարհային քարտեզ», որի նպատակն է օգնել սովորողին ձևավորելու իր սպասելիքները տվյալ բաժնում կամ գլխում ներկայացված նյութից: Որոշվում է նաև, թե յուրաքանչյուր բաժնի կամ գլխի վերջում առկա է արդյոք ամփոփում կամ եզրահանգումներ, որոնց շնորհիվ ցույց են տրվում նաև նախորդ և հաջորդ թեմաների միջև կապերն ու անցումները:

10-3 բնութագրիչով որոշվում է, թե տրոհված մասերից յուրաքանչյուրը արդյոք ներկայացված է բովանդակության այնպիսի ծավալով և խորությամբ, որ իրատեսական է դրա յուրացումը տվյալ մասի համար նախատեսված ժամանակի ընթացքում:

Այս բնութագրիչի վերաբերյալ գնահատում կատարելիս նպատակահարմար է համեմատություններ անել ուսուցչի ձեռնարկում ներկայացված օրինակելի թեմատիկ պլանի հետ (տես ՈւՁ 2-4 բնութագրիչը):

Դ չափանիշ 11

Այս չափանիշով դասագրքի վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե բովանդակությունը ներկայացնելիս ինչպես են օգտագործված ձևի տեսակետից հեշտ ընկալելի այնպիսի հնարներ, որոնք օգնում են սովորողին դասագրքի հետ տարբեր աշխատանքներ կատարելու ընթացքում արագ կողմնորոշվելու անհրաժեշտ տեղեկույթ որոնելիս և ուսումնական նյութեր ընտրելիս:

11-1 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ուղղորդող ցանկեր, ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ միայն դասագրքի կառուցվածքին և բովանդակային տրոհված մասերին վերաբերող ցանկին, այլև առարկայացանկին (դրանում ներկայացվում են կարևոր, առանցքային տեղեկությունները, հասկացությունները, օրենքները, երևույթները, իրադարձությունները՝ էջերի նշումով, այբբենական դասավորությամբ), անվանացանկին (մարդկանց և տեղանունների անվանումները), ինչպես նաև բառարանին՝ կախված առարկայի առանձնահատկությունից:

11-2 և **11-3** բնութագրիչներով որոշվում են, թե որքանով են նպատակային ու հարմար կողմնորոշող համակարգի տարրերը՝ ուսումնական հիմնական, լրացուցիչ, օժանդակ նյութերի, առաջադրանքների տեսակների համար օգտագործված նշանները, պայմանանշանները, տարբերանշանները, հուշող բառերը: Որոշվում են նաև, թե որքանով են պարզ ու ընկալելի դրանց ցուցումները՝ արդյոք հեշտ են մտապահվում: Միաժամանակ պետք է հետևել, որ դասագրքի էջերը անտեղի ծանրաբեռնված չլինեն կողմնորոշող համակարգի տարրերի խայտաբղետ բազմազանությամբ, որպեսզի դյուրին լինի դրանցից օգտվելը:

Դ չափանիշ 12

Այս չափանիշով դասագրքի վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա բովանդակության ներկայացման եղանակը ինչպիսի հնարավորություններ է ընձեռում ուսուցման տարբեր մեթոդներ կիրառելու, ուսումնառության տարբեր ոճեր և տարբեր կարողություններ ունեցող սովորողների կողմից դասագրքով տարբեր բնույթի աշխատանքներ կատարելու, այդ թվում նաև դասագրքի ուղղորդմամբ տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու նպատակով:

12-1 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերի, ինչպես նաև առաջադրանքների զգալի մասը արդյոք ներկայացված է այնպես, որ ապահովվում է ուսումնառության տարբեր ոճեր և ուսուցման տարբեր մեթոդներ ընտրելու հնարավորություն:

Պետք է նկատի ունենալ, որ դասագրքում կարող են լինել նաև որոշ նյութեր՝ նախատեսված այս կամ այն որոշակի մեթոդի գործածության նպատակով, սակայն ամբողջությամբ վերցրած՝ բովանդակային նյութերը չպետք է պարտադրեն ուսուցման և ուսումնառության որոշակի մեթոդի կիրառություն:

12-2 բնութագրիչով որոշվում է, թե բովանդակության ներկայացման եղանակը ինչպես է հարմարեցված սովորողների կրթական կարիքներից կախված՝ տարբերակված աշխատանք կատարելու համար: Տարբերակումը կարող է լինել՝ ա) ըստ հարցադրումների տեսակի՝ մտապահելու, մեկնաբանելու, կիրառելու, համադրելու, գնահատելու և այլն, բ) ըստ առաջադրանքների բարդության աստիճանի, գ) ըստ սովորողների հետաքրքրությունների և ուսումնառության ոճերի, դ) ըստ ուսումնական գործունեության տեսակների՝ տեղեկատվության որոնում և ընտրում, տեղեկությունների վերլուծություն, հարցումների և հարցազրույցների անցկացում, հետազոտությունների իրականացում, ստեղծագործական-կառուցողական աշխատանքների կատարում և այլն:

12-3 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերը և հատկապես առաջադրանքները արդյոք այնպես են տարբերակված կամ դասակարգված, որ հնարավորություն է ստեղծվում արդյունավետ իրականացնելու ինչպես անհատական, այնպես էլ զույգերով և փոքր խմբերով աշխատանքներ: Պետք է նկատի ունենալ, որ այդպիսի տարբերակման շնորհիվ պայմաններ են ստեղծվում ուսումնառության և ուսուցման կազմակերպման տարբեր եղանակների, ուսուցման տարբեր մեթոդների կիրառության համար:

12-4 բնութագրիչով որոշվում է, թե ինչպես է կարևորվում S<S հնարավորությունների օգտագործումը տվյալ առարկայի կրթական խնդիրների իրականացման գործում, S<S կիրառության շնորհիվ ինչպես է հարստանում ուսումնառության եղանակների ու մեթոդների բազմազանությունը: Այդ առումով պետք է պարզել, թե տարբեր թեմաների համար առկա են արդյոք դրանց բովանդակության հետ առնչվող այնպիսի առաջադրանքներ, որոնք ենթադրում են S<S-ի ակտիվ կիրառում. օրինակ՝ համացանցում անհրաժեշտ տեղեկության որոնում, աշխատանք ուսումնական բջջային հավելվածներով, աշխատանք դասարանային, դպրոցական կայքում, առցանց հարցումների, քննարկումների, ուսումնական նախագծերի իրականացում և այլն:

Նկատենք, որ այս բնութագրիչի հատկանիշների առկայությունը գնահատելիս պետք է հաշվի առնել սովորողների՝ S<S գծով պատրաստվածությանը վերաբերող համապատասխան ուսումնական առարկայի (ինֆորմատիկայի) ծրագրային և չափորոշչային պահանջները:

Դ չափանիշ 13

Այս չափանիշով դասագրքի վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե մեթոդական ապարատի միջոցով ինչպիսի լրացուցիչ հնարավորություններ են ստեղծվում բովանդակության յուրացումը դյուրին դարձնելու,

առաջադրանքների կատարումը ուղղորդելու և ուսումնառության գործընթացին նպաստելու համար:

13-1, 13-2, 13-3 բնութագրիչներով որոշվում է տարբեր տեսակի առաջադրանքների կատարման եղանակներին, դասագրքի տրոհված մասերում առաջադրանքների՝ ըստ տեսակի և ըստ բարդության աստիճանի բաշխվածությանն ու հաջորդականությանը վերաբերող մոտեցումների նպատակահարմարությունը և դրանց համապատասխանությունը մատչելիության սկզբունքին:

13-4 բնութագրիչով որոշվում է, թե բովանդակության ներկայացումը ինչպես է ուղեկցվում յուրացմանը նպաստող ոչ խոսքային միջոցներով (նկարներ, գծապատկերներ, քարտեզներ, դիագրամներ, աղյուսակներ, գրաֆիկներ և այլն):

Ծանոթություն: Դասագրքի ձևավորման չափանիշներից մեկը՝ չափանիշ 21-ը, նույնպես վերաբերում է բովանդակության ներկայացմանն ոչ խոսքային միջոցներին, սակայն մի դեպքում (բնութագրիչ 13-4-ում) այն դիտվում է որպես մեթոդական ապարատի տարր (այս դեպքում կարևորվում է անհրաժեշտ ոչ խոսքային միջոցների առկայությունն ու նպատակահարմարությունը), իսկ մյուս դեպքում (չափանիշ 21-ում)՝ որպես պատկերագրողման տարր (այդ դեպքում կարևորվում է օգտագործված ոչ խոսքային միջոցների ձևավորումը):

Դ չափանիշ 14

Այս չափանիշով դասագրքի վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում մեթոդական ինչ միջոցներ և գործիքներ են օգտագործված սովորողի ինքնուրույն ուսումնառությանը նպաստելու նպատակով, ընդ որում՝ հաշվի են առնված սովորողների կարողությունների և ուսումնառության ոճերի տարբերությունները:

14-1 բնութագրիչով որոշվում է ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերի բովանդակությունների յուրացմանը նպաստող բառարանների, պարզաբանող օրինակների, բացատրու-

թյունների, ինչպես նաև տեղեկատվության հավաստի աղբյուրների հղումների առկայությունը և դրանց բազմազանությունը՝ այն հաշվով, որ հասանելի լինեն տարբեր կարողությունների սովորողների համար:

14-2 բնութագրիչով որոշվում է տարբեր բնույթի առաջադրանքների ինքնուրույն կատարմանը նպաստող միջոցների և գործիքների առկայությունը: Ներկայացնենք այդպիսի օրինակներ.

— « . . . հարցը պատասխանելու համար վերընթերցիր . . . տեքստը»

— « . . . խնդիրը լուծելու համար օգտվիր . . . խնդրի լուծման եղանակից»

— « . . . առաջադրանքը կատարելիս առաջնորդվիր . . . քայլարշավով»

— « . . . վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար օգտվիր . . . կայքից»

14-3 բնութագրիչով որոշվում է, թե առկա է արդյոք առաջադրանքների այնպիսի բազմազանություն, որը սովորողին հնարավորություն է տալիս աստիճանաբար զարգացնելու իր իմացական մակարդակը՝ ըստ իմանալու, հասկանալու, կիրառելու, վերլուծելու, համադրելու, գնահատելու, ստեղծագործելու ուսումնական նպատակների աստիճանակարգման, ինչն իր հերթին սովորողից ակնկալում է համապատասխան ուսումնական վարքագծի փոփոխություն:

Դ չափանիշ 15

Այս չափանիշով դասագրքին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում մեթոդական մշակված ինչպիսի գործիքակազմ է օգտագործված ուսումնառության ընթացքն ու արդյունքները ստուգելու և գնահատելու նպատակով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է սովորողի կողմից ինքնագնահատում կատարելու հարցերի, խնդիրների և այլ առաջադրանքների առկայությանը ինչպես դասագրքի տրոհված մասերում, այնպես էլ դասագրքի վերջում:

15-1 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի՝ ծրագրային ամբողջական թեմա ներկայացնող մասերից յուրաքանչյուրի (բաժնի կամ գլխի) վերջում առկա են արդյոք տվյալ թեմայի համար նախատեսված արդյունքների ձեռքբերումը ստուգելու հարցեր, թեստեր, խնդիրներ կամ այլ առաջադրանքներ: Որոշվում է նաև դասագրքի վերջում համանման առաջադրանքների առկայությունը, ինչի շնորհիվ հնարավոր է կատարել տվյալ դասընթացի տարբեր թեմաներին և դրանց կապերին վերաբերող գիտելիքների ու հմտությունների ստուգում:

15-2 բնութագրիչով որոշվում է դասագրքում ներկայացված տարբեր տեսակի առաջադրանքների, հատկապես գործնական, հետազոտական և նախագծային աշխատանքների գնահատման եղանակին, ձևին և չափանիշներին վերաբերող պարզաբանումների առկայությունը, ինչի շնորհիվ սովորողը կարող է ճիշտ կողմնորոշվել իր աշխատանքը կատարելիս և կարծիք ունենալ կատարածի գնահատման վերաբերյալ:

15-3 բնութագրիչով որոշվում է սովորողների ուսումնական ձեռքբերումների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման այնպիսի գործիքների առկայությունը, որոնք վերբերում են թեմայի, ուսումնական նյութի տեքստի առանձին հատվածի բովանդակության յուրացմանը, կատարած աշխատանքի արդյունքներին, գիտելիքներին, հմտություններին, արժեքների նկատմամբ վերաբերմունքին և այլն: Դրանք ըստ նպատակահարմարության կարող են ներկայացված լինել ինչպես դասագրքում, այնպես էլ առցանց՝ ինքնաստուգման հնարավորություն ունեցող էլեկտրոնային տարբերակով:

Դ չափանիշ 16

Այս չափանիշով դասագրքին ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա շարադրման լեզուն ինչպես է համապատասխանում գրական լեզվի նորմերին, և մյուս կողմից՝ սովորողի տարիքի հետ կապված լեզվական իմացության և մտածողության առանձնահատկություններին:

16-1 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի բովանդակության շարադրման լեզուն (տեքստերի տեսակները, ոճը, կառուցվածքը, նախադասությունների տեսակները, կազմությունը, կառուցվածքը և այլն) համապատասխանում է արդյոք տվյալ տարիքի սովորողների լեզվական իմացության այն մակարդակին, ինչը նախատեսված է հայոց լեզվի (համապատասխանաբար նաև յուրաքանչյուր օտար լեզվի) առարկայական չափորոշիչով և ծրագրով:

16-2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերի, առաջադրանքների, դրանց բացատրությունների շարադրման լեզուն և ոճը համապատասխանում են արդյոք ժամանակակից գրական լեզվի ուղղագրական, կետադրական, շարադասական, շարահյուսական կանոններին: Որոշ բացառություններ կարող են լինել միայն տարբեր հեղինակներից ուղղակի մեջբերված տեքստերում, սակայն կարևոր է, որ հեղինակային տեքստերի ընկալումն ապահովելու նպատակով ըստ անհարժեշտության առկա լինեն բացատրություններ կամ բառարան:

16-3 բնութագրիչով որոշվում է, թե տեքստերում որքանով է հիմնավոր և անհրաժեշտ նոր եզրույթների ու անծանոթ բառերի օգտագործումը, դրանց ներմուծման արդյունքում արդյոք առավել որոշակի և հստակ է դառնում տեքստի բովանդակությունը, թե տեքստն անտեղի ծանրաբեռնվում է, և հարուցվում են ընկալման դժվարություններ: Կարևոր է նաև այն, թե արդյոք բացատրվում են նոր եզրույթներն ու անծանոթ բառերը, և այն, թե ինչպես են բացատրվում (բացատրությունները պետք է լինեն հասկանալի և հակիրճ):

16-4 բնութագրիչով որոշվում է, թե տեքստում ձևակերպված մտքերն արդյոք միանշանակ են ընկալվում, թե առկա են տարբեր ընթերցողների կողմից տարբեր մեկնաբանությունների առիթ տրվող ձևակերպումներ: Ձևակերպումների որոշակիության պահանջը պետք է բավարարված լինի նաև առաջադրանքների, հանձնարարությունների, հրահանգների շարադրանքներում: Պետք է նկատի ունենալ, որ առանձին դեպքերում տեքստերում

կարող են հանդիպել նաև տարբեր մեկնաբանությունների հնարավորություն ընձեռող ձևակերպումներ, սակայն այդ դեպքերում բացահայտ պետք է երևա այդպիսի ձևակերպումներից յուրաքանչյուրի նպատակը:

16–5 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերում (կամ դրանց կից) առկա են արդյոք այնպիսի արտահայտություններ, ասույթներ, թեևավոր մտքեր կամ ուշագրավ փաստեր, որոնց շնորհիվ դասագրքի բովանդակության զուտ առարկայական «չոր» շարադրանքը կդառնա ավելի գրավիչ. դրանք լրացուցիչ խթան կդառնան դասագրքի հետ աշխատանքը ակտիվացնելու, ինչպես նաև սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու հարցում:

Դ չափանիշ 17

Այս չափանիշով դասագրքին ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա շարադրման ընթացքում ինչպես են հաշվի առնված տվյալ առարկան ներկայացնող գիտությանը կամ բնագավառին վերաբերող մասնագիտական գրականության մեջ ընդունված և գործածվող լեզվական ոճին և արտահայտչաձևերին բնորոշ առանձնահատկությունները:

17–1 բնութագրիչով որոշվում է, թե տեսական նյութի բովանդակության արտահայտման ճշգրտությունն ապահովելու նպատակով արդյոք օգտագործված են համարժեք բառապաշար, խոսքային կառույցներ, մտքերի հստակ ձևակերպումներ այնպես, որ տեքստում չի խախտվում գիտականության սկզբունքը:

17–2 բնութագրիչով որոշվում է, թե արդյոք անհրաժեշտաբար է կատարվել նոր եզրույթների ու նոր գաղափարների ներմուծումը: Այդ անհրաժեշտությունը հիմնավորվում է դրանց՝ առարկայական չափորոշիչ և ծրագրի հետ անմիջական կապ ունենալը պարզելու միջոցով: Նկատենք, որ այս բնութագրիչով, փաստորեն, նպատակ է դրվում կանխելու նոր եզրույթների չպատճառաբանված առատությունը տեքստերի շարադրանքում: Պետք է նկատի ունենալ, որ նոր եզրույթի ներմուծումն

անհրաժեշտ է այն դեպքում, երբ բովանդակության շարադրանքի շարունակության մեջ նրա գործածումն ունենալու է բազմակի կրկնություններ տարբեր համատեքստերում:

17–3 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի շարադրման լեզուն սովորողի կողմից տվյալ գիտության կամ բնագավառի «լեզվի» յուրացմանը նպաստելու հետ մեկտեղ արդյոք օգնում է նրան, որպեսզի հարստացնի, ընդլայնի և բազմազան դարձնի սեփական լեզվական պաշարը, խոսքային հնարավորություններն ու հաղորդակցական այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են կյանքում:

17–4 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի ամբողջ շարադրանքում պահպանված են արդյոք տեքստերի փոխադրման, տեղայնացման, մեջբերման ոճերի միասնականություն, որը համապատասխանում է տվյալ առարկային և սովորողների տվյալ տարիքին բնորոշ լեզվական իմացությանն ու ընկալման հնարավորություններին: Պետք է նկատի ունենալ, որ առանձին դեպքերում (առավելապես լեզվի և գրականության պարագայում) հնարավոր է լինեն նաև ոճային տարածություններ, սակայն դրանք պետք է ունենան տեսանելի նպատակ:

Դ չափանիշ 18

Այս չափանիշով դասագրքին ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում ընդգրկված հիմնական ու լրացուցիչ ուսումնական նյութերը և առաջադրանքներն ինչպես են նպաստում սովորողների լեզվական–հաղորդակցական կարողությունների և խոսքի մշակույթի զարգացմանը՝ տվյալ ուսումնական առարկայի ընձեռած հնարավորությունների շրջանակում:

18–1, 18–2 և 18–3 բնութագրիչներով որոշվում են, թե դասագրքում ընդգրկված են արդյոք այնպիսի հարցադրումներ և առաջադրանքներ, որոնք ծառայում են այդ բնութագրիչներում մատնանշված հատկանիշների առկայությունը ապահովելու նպատակին: Պետք է պարզել՝ խոսքի մշակույթի զարգացման

ուղղությամբ արդյոք նպատակային և համակարգված են ներկայացված այդպիսի հարցադրումներն ու առաջադրանքները, թե դրանք կրում են պատահական կամ տարերային բնույթ:

18–4 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքում արդյոք առկա են այնպիսի նյութեր, որոնք սովորողի մեջ առաջացնում են հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ, նպաստում են ընթերցելու կարևորության գիտակցմանը և պահանջմունքի ձևավորմանը: Այդպիսի նյութեր կարող են լինել, օրնակ՝

- այս կամ այն թեմային վերաբերող տեքստում որևէ սկզբնաղբյուրից մեջբերված կամ փոխադրված կարևոր միտք, ուշագրավ փաստ, որն առաջացնում է իմացական հետաքրքրություն և դրդում է ընթերցելու այդ սկզբնաղբյուրը,
- այս կամ այն առաջադրանքում սովորողների համար կարևորություն ունեցող հարցադրում, որի պատասխանի որոնումը ենթադրում է ուղղորդվող տեղեկատվության աղբյուրի (գրքի, հոդվածի և այլն) ընթերցում,
- հետազոտական կամ նախագծային աշխատանքի առաջադրում, որի կատարման համար պահանջվում է տեղեկատվության աղբյուրի որոնում, ուսումնասիրում, վերլուծում և այլն,
- նշանավոր մարդկանց կողմից ընթերցանության վերաբերյալ արտահայտված ասույթների, թևավոր խոսքերի ներկայացում:

Դ չափանիշ 19

Այս չափանիշով դասագրքին ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրա կառուցվածքը և տպագրության որակը որքանով են նպաստավոր տվյալ տարիքի սովորողների կողմից արդյունավետ և անվտանգ օգտագործելու համար:

Պետք է նկատի ունենալ, որ այս չափանիշով գնահատումը կատարվում է դասագրքի բովանդակությանը վերաբերող բնութագրիչներում ներկայացված հատկանիշներից անկախ:

19–1 բնութագրիչով որոշվում է, թե գրքի չափերը, մակետը, էջերի մակերեսներում ընդգրկված նյութերի ծանրաբեռնվածությունը հարմար են արդյոք տվյալ տարիքի սովորողներին, որպեսզի կարողանան առանց ավելորդ լարվածության աշխատել դասագրքով:

19–2 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի կառուցվածքը և ձևավորումը հնարավորություն տալիս են արդյոք նույն դասագիրքը մի քանի տարի տարբեր աշակերտների կողմից օգտագործելու համար: Այս բնութագրիչով ներկայացված պահանջների ապահովումը պարտադիր են հատկապես հաստատության գրադարանային ֆոնդում ընդգրկվող դասագրքերի համար, քանի որ դրանցում մեկնագամյա օգտագործման նյութերի առկայության դեպքում կկորչի (կամ կնվազի) դասագրքի պիտանելիությունը հաջորդ տարիներին:

19–3 բնութագրիչով որոշվում է, թե դասագրքի ձևավորման և տպագրության արդյունքում բավարարված են արդյոք այն բոլոր նորմերի պահանջները, որոնք սահմանված են առողջապահական կառույցների կամ մարմինների կողմից: Նկատենք, որ այս բնութագրիչը ենթադրում է հատուկ մասնագիտական մոտեցում, համապատասխան տեխնոլոգիաների կիրառում:

Դ չափանիշ 20

Այս չափանիշով դասագրքին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե խոսքային (բառերով, նախադասություններով, տեքստերով) արտահայտման միջոցներով ներկայացված նյութերի ձևավորման եղանակները, ձևերը և հնարները որքանով են նպաստում, որ նյութի բովանդակության ընկալումն ու յուրացումը դառնան ավելի դյուրին:

20–1 բնութագրիչով որոշվում է, թե տեքստերի շարվածքում և ձևավորման մեջ օգտագործված տառատեսակները, տառա-

չափերը, բառամիջյան և միջտողային հեռավորությունները որքանով են համապատասխանում տվյալ տարիքի սովորողներին հասցեագրվող ուսումնական գրահրատարակչությունների համար սահմանված կանոններին ու նորմերին: Ընդ որում՝ այս բնութագրիչում «տեքստի շարվածք», «ձևավորում», «տառատեսակ» բառերը պետք է ընկալել լայն իմաստով, քանի որ նկատի է առնվում նաև նշանային այն համակարգը (թվանշաններ, տարբեր այբուբենների տառեր, հատուկ նշաններ, բանաձևեր և այլն), որը ներառվում և մասնակցում է տեքստերի շարադրանքներում:

20–2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերում ինչ միջոցներ և հնարներ են օգտագործված, որոնց շնորհիվ ավելի տեսանելի են դառնում բանալի բառերը, առավել կարևորություն ունեցող դրույթներն ու տեղեկությունները:

20–3 բնութագրիչով որոշվում է, թե ձևավորման միջոցներն ու հնարները ինչքանով են նպաստում, որպեսզի հարցերի, օժանդակող նյութերի հղումների, առաջադրանքների, դրանց տեսակների տարբերումն ու օգտագործումը դառնան ավելի դյուրին:

Դ չափանիշ 21

Այս չափանիշով դասագրքին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում օգտագործված պատկերազարդման տարրերի ձևավորումը ինչպես է համադրված բովանդակության խոսքային արտահայտման միջոցների հետ, և ինչպես են կատարում բովանդակությունն ամբողջացնելու և յուրացմանը նպաստելու գործառույթները:

21–1 բնութագրիչով որոշվում է, թե տեքստերն ուղեկցող պատկերազարդման տարրերը համապատասխանում են արդյոք տեքստերին և որքանով են լրացնում կամ հարստացնում տեքստերի բովանդակությունը, արդյոք նպաստում են բովանդակային նյութի դիտողական ընկալմանը:

21–2 բնութագրիչով որոշվում է, թե պատկերազարդման տարրերի և տեքստերի համադրումը համապատասխանում է

արդյոք սովորողների տարիքային առանձնահատկություններին, առկա են արդյոք տեքստերի հետ համադրմանը վերաբերող մեկնաբանություններ, գրառումներ, ուղղորդող համարանշումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հղումներ:

21–3 բնութագրիչով որոշվում է, թե օգտագործված պատկերազարդման տարրերը որքանով են նպաստակային, արդյոք դրանք կատարում են ուսումնական որոշակի գործառույթներ, ինչպես, օրինակ՝

- ա) սովորողների ուշադրությունը կենտրոնացնում են ուսումնական որոշակի նյութի կամ խնդրի վրա (երբեմն, հատկապես նկարների պարագայում, պատկերված է լինում այնպիսի իրադրություն, որը «դրդում է» սովորողին շեղվելու ուսումնական հիմնական խնդրից և խորասուզվելու բոլորովին կողմնակի հարցերի մեջ),
- բ) օգնում են լրացնելու, համակարգելու և ամբողջացնելու նյութի բովանդակությունը,
- գ) օգնում են կանոնավորելու սովորողի մտքի ընթացքը, ուղղորդելու գործողությունները և այլն:

Դ չափանիշ 22

Այս չափանիշով դասագրքին ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե պատկերազարդումը ինչպես է նպաստում սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, արդյոք ունի նաև դաստիարակչական դերակատարություն:

22–1 բնութագրիչով որոշվում է, թե պատկերազարդման տարրերն արդյոք ձևավորված են այնպես, որ դրանցում արտացոլված բովանդակության ընկալումը լինի դյուրին և հաճելի, միաժամանակ ձևավորումը նպաստի սովորողների գեղագիտական դաստիարակությանը:

22–2 բնութագրիչով որոշվում է, թե տվյալ առարկայի ընձեռած հնարավորությունների շրջանակում արդյոք օգտագործված են պատկերազարդման այնպիսի տարրեր, որոնք առնչություն ունեն հայկական և համաշխարհային մշակույթների հետ, վերա-

բերում են հայաստանյան և համաշխարհային իրողություններին: Պատկերազարդման այդպիսի տարրեր կարող են լինել, մասնավորապես, նաև որոշակի կրթական խնդիր լուծելու նպատակով ընտրված արվեստի բարձրարժեք գործերի, տարբեր հեղինակների ստեղծագործությունների վերատպություններ, բնությանը, տեխնիկային, կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող լուսանկարներ, պատկերներ, դիագրամներ և այլն (անհրաժեշտության դեպքում կարող են լինել նաև այլ աղբյուրների հղումներ):

22–3 բնութագրիչով որոշվում է, թե պատկերազարդումը պատկերում է արդյոք այնպիսի նյութեր, որոնք արտացոլում են տվյալ տարիքի սովորողի կյանքին, կենսագործունեությանը, սպասելիքներին վերաբերող իրադրություններ, ինչի շնորհիվ դասագիրքը «հարազատ» է դառնում նրա համար:

22–4 բնութագրիչով որոշվում է, թե օգտագործված պատկերազարդման տարրերի համար պատշաճ ձևով պահպանված են արդյոք հեղինակային իրավունքին վերաբերող նորմերը:

ԳԼՈՒԽ 5

ԴԱՍԱԳՐՔԻՆ ԿԻՑ ՈՒՍՈՒՑԶԻ ՁԵՌՆԱՐԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՁ չափանիշ 1

Այս չափանիշով ձեռնարկը գնահատվում է այն տեսանկյունից, թե նրանում առկա է արդյոք ներածական նյութ, որում ընդհանրական պարզաբանումներ են ներկայացված դասընթացի նպատակների ու խնդիրների, դասագրքում դրանց հետ կապված մոտեցումների, դասագրքի և ՈՒՁ-ի կառուցվածքի ու մեթոդական ապարատի վերաբերյալ:

1-1 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք պարզաբանումներ տվյալ ուսումնական առարկայի կրթական նպատակների, խնդիրների և ակնկալվող վերջնարդյունքների վերաբերյալ, ինչը կարևոր նշանակություն ունի դասագրքի բովանդակության ճիշտ ընկալման և մեկնաբանման համար:

1-2 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ընդհանրական պարզաբանումներ այն մասին, թե դասագրքում ինչ տեսակի ուսումնական նյութերով և ինչ եղանակներով են ներկայացված կրթության բովանդակության այն բաղադրիչները (գիտելիք, հմտություն, վերաբերմունք, արժեք), որոնք նախատեսված են առարկայական ծրագրով և չափորոշյով:

1-3 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք այնպիսի պարզաբանումներ, մեկնաբանություններ և հիմնավորումներ դասագրքի և ՈՒՁ-ի կառուցվածքների և մեթոդական ապարատի վերաբերյալ, որոնք կուղղորդեն և կօգնեն, որպեսզի դասագիրքն ու ՈՒՁ-ն օգտագործվեն ավելի արդյունավետ:

ՈՒՁ չափանիշ 2

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե ինչպիսի նյութեր են նրանում ընդգրկված, որոնք կօգնեն ուսուցչին կազմելու տվյալ դասագրքով աշխատելուն հարմարեցված թեմատիկ պլան:

Որպես օգնության նախընտրելի եղանակ է ընդունվում օրինակելի թեմատիկ պլանի ներկայացումը, սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ պլանը պարտադրական չէ, ենթադրում է նաև այլընտրանքային տարբերակների, ուսուցչի ստեղծագործական մոտեցումների հնարավորություն:

2-1 բնութագրիչով որոշվում է, թե ներկայացված թեմատիկ պլանը ինչպես է համապատասխանում առարկայական ծրագրին և ուսումնական պլանին:

2-2 բնութագրիչով որոշվում է, թե ներկայացված թեմատիկ պլանը ինչպես է «համաձայնեցված» դասագրքի հետ՝ պլանավորված թեմաների և դասերի (ենթաթեմաների) հաջորդակա-նությու-նն արդյոք այնպիսին է, որ դասագրքի օգտագործումը դառնա հարմար և արդյունավետ:

2-3 բնութագրիչով որոշվում է, թե ծրագրային թեմաների՝ ըստ ենթաթեմաների (դասերի) տրոհումները ուղեկցվում են արդյոք տրոհված մասերի ուսուցման նպատակների կամ ակնկալվող արդյունքների որոշակիացումներով:

Ծանոթություն 1. Թեմատիկ պլանում ծրագրային թեմաների՝ ըստ ենթաթեմաների (դասերի) տրոհումը չի ենթադրում անպայման դաս առ դաս տրոհում. առանձին դեպքերում կարող են լինել նաև այնպիսի ենթաթեմաներ, որոնց համար նախատեսվի, օրինակ, 2 կամ նույնիսկ 3 կամ ավելի դասաժամ:

Ծանոթություն 2. Թեմատիկ պլանին պետք է վերաբերվել որպես աշխատանքային փաստաթղթի, որը ուսուցչի կողմից տարվա ընթացքում անհրաժեշտության դեպքում կարող է վերանայվել, լրացվել կամ ենթարկվել մասնակի փոփոխության (ցան-

կալի է, որ այդ փոփոխությունները նշվեն նախապես հատկացված սյունակում):

2–4 բնութագրիչով որոշվում է, թե թեմատիկ պլանում ժամաքանակի՝ դասերի (ենթաթեմաների) բաշխումը որքանով է համապատասխանում դասերից (ենթաթեմաներից) յուրաքանչյուրի կրթական նպատակներին, ակնկալվող արդյունքներին և բովանդակային նյութի ծավալին:

ՈւՁ չափանիշ 3

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում ինչպիսի ուղղորդումներ են առկա, և ինչպես են պարզաբանված ծրագրային թեմաների կրթական նպատակների ու խնդիրների իրականացման վերաբերյալ դասագրքում ցուցաբերված մոտեցումներն ու նրանում ընդգրկված ուսումնական նյութերը: Ընդ որում՝ գնահատման կարևոր ցուցանիշ են դասագրքում ընդգրկված նյութերի ոչ միայն բավարար (լրիվ, ամբողջական) լինելը հաստատող, այլև անհրաժեշտ (անտեղի ծանրաբեռնվածություն չառաջացնող) լինելը հաստատող պարզաբանումները:

3–1 բնութագրիչով որոշվում է, թե արդյոք ծրագրում ընդգրկված բոլոր թեմաների համար են մատնանշված դասագրքում առկա այն ուսումնական նյութերը, որոնք ծառայում են այդ թեմաների կրթական նպատակների և խնդիրների իրականացմանն ու վերջնարդյունքների ապահովմանը:

3–2 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք լրացուցիչ պարզաբանումներ, բացատրություններ, մեկնաբանություններ թեմաների առանցքային հարցերի և դրանց նվիրված ուսումնական նյութերի վերաբերյալ: Խոսքն այն հարցերի մասին է, որոնք ունեն ճանաչողական և կիրառական մեծ նշանակություն, դրանք կարևոր դեր ունեն մյուս թեմաների յուրացման գործում, ուստի և պահանջում են առանձնահատուկ ուշադրություն: Ուշադրության են արժանի նաև այն հարցերը, որոնց հետ կապված են ուսուցման դժվարությունները:

3-3 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք պարզաբանումներ, ուղղորդումներ, ցուցումներ յուրաքանչյուր թեմայի շրջանակում միջառարկայական կապերի ապահովման, դասագրքում դրանց առնչվող նյութերի օգտագործման վերաբերյալ:

3-4 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք պարզաբանումներ և ցուցումներ յուրաքանչյուր թեմայի շրջանակում սովորողների հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող այն նյութերի վերաբերյալ, որոնք ընդգրկված են դասագրքում: Ուշադրություն է դարձվում նաև այն բանի վրա, թե արդյոք բերված են օրինակներ, որոնցում լուսաբանվում է, թե հատկապես ինչ հմտության կամ որ արժեքի ձևավորմանն են դրանք նպաստում:

ՈՒՁ չափանիշ 4

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում ինչպիսի պարզաբանումներ, ուղղորդումներ կամ ցուցումներ են ներկայացված տարբեր կարողություններով և կրթական կարիքներով սովորողների համար դասագրքում ընդգրկված կամ հղումով հիշատակված նյութերի օգտագործման վերաբերյալ: Այդ նպատակով հիմնական ուշադրությունը պետք է ուղղել դասագրքում ընդգրկված ուսումնական լրացուցիչ նյութերի, առաջադրանքների և հղումով ներկայացված օժանդակ նյութերի օգտագործմանը վերաբերող պարզաբանումներին և ցուցումներին:

4-1 բնութագրիչով որոշվում է, թե պարզաբանված են արդյոք դասագրքում ցուցաբերված այն մոտեցումները, որոնք վերաբերում են տարբեր կարողություններ և կրթական տարբեր կարիքներ ունեցող սովորողների համար նախատեսվող աշխատանքի ձևերին ու մեթոդներին:

4-2 բնութագրիչով որոշվում է, թե ձեռնարկում առկա են արդյոք ուղղորդումներ, մեկնաբանություններ, մեթոդական ցուցումներ դասագրքում ընդգրկված տարամակարդակ այն նյութերի և առաջադրանքների օգտագործման վերաբերյալ, որոնք

նախատեսված են տարբեր կարողություններ և կրթական տարբեր կարիքներ ունեցող սովորողների համար:

4–3 բնութագրիչով որոշվում է, թե ձեռնարկում առկա են արդյոք պարզաբանումներ և ուղղորդումներ սովորողների ուսումնական հետաքրքրությունների բավարարման ուղղությամբ դասագրքում ընդգրկված լրացուցիչ նյութերի, այդ նպատակին ծառայող և հասցեական հղումներով ներկայացված օժանդակ նյութերի աղբյուրների վերաբերյալ: Պետք է նկատի ունենալ, որ ձեռնարկում կարող են ներկայացվել նաև լրացուցիչ այլ ուսումնական նյութերի հղումներ, որոնք դասագրքում չեն հիշատակվել:

ՈՒՁ չափանիշ 5

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում ինչպես են ներկայացված այն մեթոդական նյութերը, որոնց նպատակն է օժանդակել ուսուցչին, որպեսզի արդյունավետ օգտագործի դասագրքում ընդգրկված առաջադրանքները:

5–1 բնութագրիչով որոշվում է, թե պարզաբանված են արդյոք այն հարցերը, որոնք վերաբերում են դասագրքում ընդգրկված առաջադրանքների տարբեր տեսակների օգտագործմանը՝ ըստ կրթական տարբեր նպատակների, ինչպես, օրինակ՝ գիտելիքների ամրապնդման, ընդլայնման, խորացման, կիրառման, կարողությունների ու հմտությունների զարգացման, արժեքների նկատմամբ վերաբերմունքի ձևավորման կամ այլ նպատակների: Պետք է ուշադրություն դարձնել այն բանին՝ այդ պարզաբանումներն արդյոք ուղեկցվում են լուսաբանող օրինակներով, թե ներկայացվում են սոսկ ընդհանուր տեսական դրույթներով:

5–2 բնութագրիչով որոշվում է, թե ձեռնարկում առկա են արդյոք ուսուցչին օգնող կամ ուղղորդող նյութեր դասագրքում ընդգրկված այն հարցերի, խնդիրների և այլ առաջադրանքների վերաբերյալ, որոնց պատասխանելը, լուծելը կամ կատարելը

կապված են որոշակի բարդությունների ու դժվարությունների հետ և պահանջում են հատուկ մոտեցումներ:

5–3 բնութագրիչով որոշվում է, թե ձեռնարկում առկա են արդյոք ուսուցչին օգնող կամ ուղղորդող նյութեր՝ նվիրված դասագրքում ընդգրկված գործնական (լաբորատոր), հետազոտական և նախագծային աշխատանքների կազմակերպմանն ու կատարմանը:

5–4 բնութագրիչով որոշվում է, թե ձեռնարկում առկա են արդյոք դասագրքում ներկայացված գործնական և լաբորատոր աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի, պիտույքների, գործիքների, սարքավորումների օգտագործման, պայմանների ապահովման, աշխատանքային և անվտանգության կանոնների մասին պարզաբանումներ, ցուցումներ, խորհուրդներ կամ հրահանգներ: Նկատենք, որ այս բնութագրիչը, թեև նվազ չափով, վերաբերում է նաև հումանիտար առարկաներին, օրինակ՝ տեղեկատվության աղբյուրների և տեխնոլոգիաների օգտագործման, որոշ տեսակի խմբային աշխատանքներ կատարելու, անվտանգությանը առնչվող հնարավոր տարբեր իրավիճակներ ստեղծվելու և այլ դեպքերում:

ՈՒՁ չափանիշ 6

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե նրանում ինչպես են ներկայացված մեթոդական այն նյութերը, որոնց նպատակն է օգնել և ուղղորդել ուսուցչին իրականացնելու ուսուցման ընթացքի և արդյունքների ստուգում և գնահատում, արդյունավետ օգտագործելու դասագրքում գնահատման ուղղությամբ ընդգրկված նյութերն ու ցուցաբերված մոտեցումները:

6–1 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ընհանրական, ամփոփ պարզաբանումներ տվյալ ուսումնական առարկային բնորոշ գնահատման եղանակների, տեսակների, ձևերի, չափանիշների վերաբերյալ, բերված են արդյոք լուսաբանող օրինակներ՝ վկայակոչելով դասագրքում ընդգրկված նյութերը:

6–2 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք մեթոդական ցուցումներ այն հարցաշարերի, թեստերի և առաջադրանքների օգտագործման վերաբերյալ, որոնք դասագրքում ընդգրկված են ստուգման և գնահատման նպատակով:

Ծանոթություն: Եթե դասագրքում գնահատման նպատակին ծառայող առանձին հարցաշարեր, թեստեր, առաջադրանքներ չեն ընդգրկված (կամ ընդամենը եզակի օրինակներ են ընդգրկված), ապա այդ դեպքում պետք է որոշել, թե ձեռնարկում առկա են արդյոք մեթոդական պարզաբանումներ այն մասին, թե գնահատման նպատակով ինչպես օգտագործել դասագրքում ուսումնական հիմնական և լրացուցիչ նյութերին կից ներկայացված հարցերը, խնդիրները և այլ առաջադրանքները:

6–3 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ընթացիկ և ամփոփիչ (թեմատիկ, կիսամյակային և այլ) գնահատումներին ծառայող լրացուցիչ առաջադրանքներ, որոնց միջոցով ցուցադրվում և ուղղորդվում են ուսուցչին, որպեսզի ըստ անհրաժեշտության նա կարողանա ինքնուրույն կազմել համանման առաջադրանքներ կամ ընտրել վստահելի աղբյուրներից:

ՈՒՁ չափանիշ 7

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե ինչպիսի նյութեր են նրանում ընդգրկված, որոնք կօգնեն ուսուցչին պլանավորելու դասը և դրա իրականացման գործում արդյունավետ օգտագործելու դասագրքի հնարավորությունները: Այդպիսի օգնության նախընտրելի եղանակ է դիտվել տարբեր տեսակի դասերի օրինակելի պլանների ներկայացումը ձեռնարկում: Պետք է նկատի ունենալ, որ այդ պլանները պարտադրական չեն, կարևորը դրանցում ցուցաբերված մոտեցումներն ու սկզբունքներն են, որոնք կարող են հաշվի առնվել ուսուցչի կողմից իր վարած դասերը պլանավորելիս:

7–1 բնութագրիչով որոշվում է, թե ներկայացված դասի պլանում որքանով են հստակ նպատակներն ու ակնկալվող արդյունքները, արդյոք դրանք համապատասխանում են առար-

կայական չափորոշչով և ծրագրով նախատեսված նպատակներին ու արդյունքներին:

Միաժամանակ որոշվում է, թե անհրաժեշտ ռեսուրսների պլանավորման մեջ մատնանշված են արդյոք դասավանդման նյութերը՝ ուսուցչի համար, և ուսումնառության նյութերը՝ սովորողների համար, ընդ որում՝ պետք է հետևել, որ արդյունավետ օգտագործված լինեն դասագրքում ընդգրկված նյութերը:

7–2 բնութագրիչով որոշվում է, թե արդյոք որոշակի են դասի փուլերի, ուսուցման մեթոդների, արդյունքների ստուգման և գնահատման եղանակների նկարագրությունները: Պետք է նկատի ունենալ, որ մեթոդների ընտրությունը, ի թիվս այլ գործոնների, կախված է լինելու տվյալ դասի նպատակից, ուսումնական նյութերի բովանդակությունից, առկա ռեսուրսներից, իսկ առաջարկվող գնահատման եղանակը ծառայելու է պլանավորված ուսումնական արդյունքների ձեռքբերումը բացահայտելուն:

7–3 բնութագրիչով որոշվում է, թե որքանով են հստակ ներկայացված հաջորդական այն գործողությունները, որոնք դասի ընթացքում կատարվելու են ուսուցչի և սովորողների կողմից: Ուշադրություն է դարձվում նաև այն բանին, թե որքանով է իրատեսական կատարելիք գործողությունների համար նախատեսվող ժամանակի բաշխումը:

7–4 բնութագրիչով որոշվում է, թե պլանում նախատեսված է արդյոք դասի նպատակներին, բովանդակային առանձնահատկություններին համապատասխանող ամփոփում և դասի ընթացքում կատարված գործողությունների ու դրանց արդյունքների վերլուծություն ենթադրող անդրադարձ:

ՈՒՁ չափանիշ 8

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե ինչպես է այն նպաստում, որ ուսուցչին հասանելի և հարմար լինեն ուսուցման գործընթացում և դրան հարակից աշխատանքներում օգտագործման համար անհրաժեշտ նյութերն ու վստահելի տեղեկատվությամբ աղբյուրները:

8-1 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ուսուցչի ձեռնարկի օգտագործմանը նպաստող լրացուցիչ նյութեր, ինչպես, օրինակ՝ բովանդակության ցանկ, օգտագործված եզրույթների, հասկացությունների բառարան, առարկային առավել բնորոշ և սովորողների տվյալ տարիքին համապատասխանող ուսումնական աշխատանքների տեսակների բնութագրեր և այլն:

8-2 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք ըստ թեմաների երաշխավորվող գրականության ցանկ, էլեկտրոնային նյութերի, աղբյուրների հղումներ, դասագրքին զուգահեռ դրանց կիրառության վերաբերյալ մեթոդական ցուցումներ, համապատասխան S<S միջոցների օգտագործման խորհուրդներ:

8-3 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք հավելյալ նյութեր, որոնք նախատեսված են դասավանդման հետ սերտորեն փոխկապակցված տարբեր աշխատանքներում (ցերեկույթ, մրցույթ, ստուգատես, խմբակ, օլիմպիադա, ցուցահանդես և այլն) ուսուցչին ուղղորդելու և օգնելու նպատակով:

ՈՒՁ չափանիշ 9

Այս չափանիշով ձեռնարկին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե դասագրքում եղած ուսումնական նյութերի, այդ թվում նաև պատկերազարդման տարրերի (նկարների, գծապատկերների, դիագրամների, աղյուսակների) կապակցությամբ ինչպիսի հիմնավորումներ և պարզաբանումներ են բերված դրանք դասագրքում ընդգրկելու անհրաժեշտության, նպատակների և ուսուցման ընթացքում դրանց օգտագործման վերաբերյալ: Այս չափանիշը, փաստորեն, հնարավորություն է

տալիս բացահայտելու՝ 1) որքանով են նպատակային դասագրքում ընդգրկված նյութերը, 2) ձեռնարկում ինչպես են պարզաբանված այդ նյութերի նշանակությունը:

Նկատենք, որ չափանիշի բնութագրիչների պահանջները կարող են բավարարվել բազմազան ձևերով՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները (տեսագրություններ, ձայնագրություններ, սահիկաշարեր և այլն):

9-1 բնութագրիչով որոշվում է դասագրքում ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի ընդգրկման անհրաժեշտությանը և նպատակներին վերաբերող հիմնավորումների ու պարզաբանումների առկայությունը, իսկ **9-2** բնութագրիչով՝ ուսուցման ընթացքում դրանց օգտագործմանը վերաբերող պարզաբանումների առկայությունը: Կարևորն այն է, որ ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի մասին ուսուցիչը պետք է տեղեկացված լինի, թե ինչու են դրանք անհրաժեշտ, ինչ նպատակի են ծառայում, և դրանցից յուրաքանչյուրն ինչպես է օգտագործելու ուսուցման ընթացքում:

9-3 բնութագրիչով որոշվում է, թե արդյոք կան պարզաբանումներ այն մասին, թե ինչպես իրականացնել ձևավորող գնահատում, որպեսզի պարզվի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման գործում դասագրքում ընդգրկված նյութերի ազդեցությունը:

ԳԼՈՒԽ 6

ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՆ չափանիշ 1

Այս չափանիշով ուսումնական նյութերին ընդհանրական գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե դրանց բովանդակությունը որքանով է վերաբերում դասընթացի ծրագրին և ինչպես է համադրվում դասագրքերի բովանդակության հետ:

1-1 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերի բովանդակությունն արդյոք անմիջական կապ ունի դասընթացի ծրագրի հետ, թե այդ կապը միջնորդավորված է կամ գրեթե բացակայում է: Հնարավոր է, որ ուսումնական նյութն ունենա ընդհանուր կրթական նշանակություն, սակայն անմիջական առնչություն չունենա ծրագրային և չափորոշչային պահանջների հետ: Այդ դեպքում տվյալ նյութի համար 1-1 բնութագրիչով դրական միավոր չի տրվում (այդպիսի արժեքավոր նյութերին կարող են դրական միավորներ տրվել ուրիշ բնութագրիչներով):

1-2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերի բովանդակությունը ինչպիսի առնչություն ունի դասագրքերի բովանդակության հետ, արդյոք լրացնում կամ խորացնում է դասագրքերում ներկայացված բովանդակությունը, թե տարբերվում է ընդամենը արտահայտման այն ձևերով, որոնք կապված են թվային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների հետ:

1-3 բնութագրիչով որոշվում է, թե արդյոք իրոք բացակայում են կրկնությունները ուսումնական նյութերի և դասագրքերի

բովանդակությունների միջև, թե առկա են նույնական տեքստեր և պատկերներ՝ մեկը թղթային, մյուսը՝ էլեկտրոնային տարբերակով:

ՈՒՆ չափանիշ 2

Այս չափանիշով ուսումնական նյութերի բովանդակության վերաբերյալ ընդհանրական գնահատական է տրվում դասագրքի բովանդակությանը վերաբերող չափանիշ 2-ի պահանջներին համանման:

2-1 բնութագրիչը համանման է դասագրքին վերաբերող 2-1 բնութագրիչին, իսկ **2-2** բնութագրիչը՝ դասագրքի 2-3 բնութագրիչին:

2-3 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերն օգտագործելու համար անհրաժեշտ տեխնոլոգիական պահանջներն արդյոք համապատասխանում են տվյալ տարիքի սովորողների՝ էլեկտրոնային (թվային) սարքերից օգտվելու պատրաստվածությանը, սովորողներն արդյոք ինքնուրույն կարող են օգտվել այդ նյութերից, թե այդ հարցում իրենց պետք է աջակցեն մեծահասակները:

ՈՒՆ չափանիշ 3

Այս չափանիշով ուսումնական նյութերի բովանդակության վերաբերյալ գնահատական է տրվում դասագրքի բովանդակության գիտականության և մատչելիության չափանիշների (չափանիշ 4 և 5) պահանջներին համանման:

3-1 բնութագրիչը համանման է դասագրքին վերաբերող 4-1 և 4-2 բնութագրիչներին:

3-2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերում օգտագործված տեխնոլոգիաները (տեսագրություններ, ձայնագրություններ, սահիկաշարեր և այլն) որքանով են նպաստում, որ

նյութի ընկալումը դառնա ավելի մատչելի և բազմակողմանի, քան թղթային տարբերակով ներկայացված նյութերն են:

3–3 բնութագրիչը համանման է դասագրքի 5–4 բնութագրիչին:

ՈՒՆ չափանիշ 4

Այս չափանիշով ուսումնական նյութերի բովանդակության վերաբերյալ գնահատական է տրվում դասագրքի բովանդակությանը վերաբերող չափանիշ 6–ի և 7–ի պահանջներին համանման:

4–1 բնութագրիչը համանման է դասագրքի 7–3 բնութագրիչին:

4–2 բնութագրիչը համանման է դասագրքի 6–1 բնութագրիչին:

4–3 բնութագրիչը համանման է դասագրքի 6–3 բնութագրիչին:

ՈՒՆ չափանիշ 5

Այս չափանիշով ուսումնական նյութերին գնահատական է տրվում դասագրքի մեթոդական ապարատին վերաբերող չափանիշ 12–ի, 13–ի, 14–ի պահանջներին համանման:

5–1 բնութագրիչը համանման է դասագրքի 14–2 բնութագրիչին:

5–2 բնութագրիչը հիմնականում համանման է դասագրքի 13–4 բնութագրիչին:

5–3 բնութագրիչը հիմնականում համանման է դասագրքի 12–3 բնութագրիչին:

ՈՒՆ չափանիշ 6

Այս չափանիշով ուսումնական նյութերին գնահատական է տրվում դասագրքին վերաբերող չափանիշ 9–ի պահանջներին համանման:

- 6–1 բնութագրիչը համանման է դասագրքի 9–1 բնութագրիչին:
- 6–2 բնութագրիչը համանման է դասագրքի 9–2 բնութագրիչին:
- 6–3 բնութագրիչը համանման է դասագրքի 9–4 բնութագրիչին:

ՈՒՆ չափանիշ 7

Այս չափանիշով ուսումնական նյութերին գնահատական է տրվում դասագրքի շարադրման լեզվին վերաբերվող չափանիշ 16–ի պահանջներին համանման:

7–1 բնութագրիչը համանման է դասագրքի 16–1 բնութագրիչին:

7–2 բնութագրիչը համանման է դասագրքի 16–2 բնութագրիչին:

7–3 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերում բավարար չափով օգտագործված են արդյոք բանավոր խոսքով ուղեկցվող տեսագրություններ, ձայնագրություններ, և դրանցում արդյոք պահպանված է բանավոր խոսքի առողանությունն ու բարեհունչությունը, դրանք նպաստում են արդյոք սովորողների խոսքի մշակույթի զարգացմանը:

ՈՒՆ չափանիշ 8

Այս չափանիշով ուսումնական նյութերին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե դրանց ձևավորումը ինչպես է նպաստում, որ օգտագործումը լինի հարմար, գրավիչ և անվտանգ:

8–1 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերն արդյոք ներկայացված են այնպես, որ դրանց և դասագրքերի զուգահեռ օգտագործումը ավելորդ անհարմարություններ չստեղծի սովորողի համար: Այդ առումով կարևոր է դիտարկել նյութերի հերթականությունը, տրոհված մասերի վերնագրերը,

գործածված նշանային համակարգը, փոխադարձ հղումները և այլ գործոններ:

8–2 բնութագրիչով որոշվում է, թե ուսումնական նյութերն արդյոք ձևավորված են այնպես, որ նրանցով աշխատելը ոչ միայն հարմար և օգտակար է, այլև հաճելի: Դա կախված է գույների ներդաշնակությունից, պատկերների շարժունությունից, ձայնի բարեհունչությունից և գեղագիտական բնույթի այլ գործոններից:

8–3 բնութագրիչով որոշվում է, թե նյութերի ձևավորումն արդյոք կատարված են այնպես, որ դրանց օգտագործման ժամանակ սովորողների մոտ ֆիզիկական (տեսողական) և հոգեբանական անվտանգության խնդիրներ չառաջանան:

ՈՒՆ չափանիշ 9

Այս չափանիշով ուսումնական նյութերին գնահատական է տրվում այն տեսանկյունից, թե դրանց օգտագործումը արդյունավետ դարձնելու համար առկա են արդյոք ուղեկցող ցուցումներ, պարզաբանումներ, խորհուրդներ, հրահանգներ, որոնք վերաբերում են ինչպես տեխնիկական միջոցներին, այնպես էլ մեթոդական ապարատին:

9–1 բնութագրիչով որոշվում է, թե ինչպիսի պարզաբանումներ, ցուցումներ և հրահանգներ են առկա ուսումնական նյութերի օգտագործման համար անհրաժեշտ տեխնիկական և տեխնոլոգիական՝ ծրագրային ապահովման վերաբերյալ, արդյոք բավարար են այդ ցուցումներն ու հրահանգները, որպեսզի սովորողը առանց մեծահասակների օգնության կարողանա ինքնուրույն օգտագործել այդ ուսումնական (էլեկտրոնային) նյութերը:

9–2 բնութագրիչով որոշվում է, թե առկա են արդյոք այնպիսի ցուցումներ և պարզաբանումներ, որոնք սովորողին կօգնեն, որպեսզի առանց լարվածության կարողանա կողմնորոշվել, թե ինչպիսի բովանդակային՝ թեմատիկ կապեր կան ուսումնական նյութերի և դասագրքերի միջև, ինչպես զուգակցի դրանց համատեղ օգտագործումը:

9-3 բնութագրիչով որոշվում է, թե ինչպիսի ցուցումներ և ուղղորդումներ կան դասագրքում և ուսումնական նյութերում առաջարկվող գործնական, հետազոտական, նախագծային և այլ առաջադրանքների ինչպես կատարման, այնպես էլ ներկայացման ձևերի ու եղանակների վերաբերյալ, այդ կապակցությամբ առկա են արդյոք օրինակների ցուցադրումներ, թե սահմանափակվում են ընդամենը տեսական բնույթի խորհուրդներով և հրահանգներով:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
Ժողովածուի մասին.....	3
Շնորհակալական խոսք.....	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	7
Օգտագործվող հասկացություններ	7
Դասագրքի, դասագրքին կից ուսուցչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի գնահատումը.....	11
ԳԼՈՒԽ 1. ԴԱՍԱԳՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	13
1.1. Դասագրքի բովանդակությանը վերաբերող չափանիշներ և բնութագրիչներ	14
1.2. Դասագրքի մեթոդական ապարատի չափանիշներ և բնութագրիչներ.....	21
1.3. Դասագրքի շարադրման լեզվի չափանիշներ և բնութագրիչներ.....	26
1.4. Դասագրքի ձևավորման չափանիշներ և բնութագրիչներ.....	29
ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱԳՐՔԻՆ ԿԻՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ	33
ԳԼՈՒԽ 3. ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ	42
ԴԱՍԱԳՐՔ(ԵՐ)ԻՆ ԿԻՑ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ	43

ԳԼՈՒԽ 4. ԴԱՍԱԳՐՔԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ	50
ԳԼՈՒԽ 5. ԴԱՍԱԳՐՔԻՆ ԿԻՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ	77
ԳԼՈՒԽ 6. ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ	87

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԱԳՐՔԻ, ՈՒՍՈՒՑՉԻ ԶԵՌՆԱՐԿԻ ԵՎ ԱՅԼ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Կազմող՝ Սարիբեկ Հակոբյան
Խորհրդակարգներ՝ Գոռ Գասպարյան, Հեղինե Խաչատրյան

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Մարիամ Կանայան
Տեխնիկական խմբագիր՝	Նվարդ Փարսաղանյան
Համակարգչային ձևավորումը՝	Գոհար Գրիգորյանի
Շապիկը՝	Վիտալի Ասրիևի
Սրբագրիչ՝	Նվարդ Փարսաղանյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60 × 84 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak